



ՌՈՒՍԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՓՈԽՆԱԽԱՐԱՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԵՐԵՎԱՆԻ ԵՒ ՊԵՔՈՒԻ ՅԱՐԱՔԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԿԱՐԳԱՒՈՐՄԱՆ ՀՈՒՈՎՈՅԹԸ

Ռուսիոյ արտաքին գործոց փոխնարար Միխայիլ Կալուզին Յայաստանի դեսպան Վադարշակ Յարութիւնեանի հետ քննարկած է Յայաստանի եւ Ազրայէճանի յարաբերութիւններու կարգաւորման հոլովոյթը: Այս մասին կը հաղորդէ «Նիուզ»-ը: Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութենէն կը յայտնեն, որ մասնաւորապէս գրոյցի ընթացքին քննարկուած են երկկողմանի օրակարգի արդիական հարցեր, ինչպէս նաեւ Ռուսիոյ, Յայաստանի եւ Ազրայէճանի ղեկավարներու միջեւ եռակողմ համաձայնութիւններու հիման վրայ հայ-ազրայէճանական յարաբերութիւններու կարգաւորման խնդիրները:

ԱԿԵԱՐԿ

ԴԱՏԱԿԱՆ ԹՂԹԱԾՐԱՐՆԵՐՈՒ ՅԱՆԿԱՐԾԱԿԻ ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

Լիբանանեան քաղաքական-արդարադատական-ֆինանսական ուղղութիւններուն վրայ արձանագրուող իրադարձութիւնները անտեսանելի թելերով իրարու հետ ազուցուած ըլլալու տպաւորութիւնը կը ձգեն:

Նաւահանգիստի պայթումի թղթածրարի քննութեան առկայութեամբ, մետասաներորդ պահուն դատական ընթացքի վերագործարկումը, արդարադատութեան ոլորտին մէջ տիրող պառակտուածութիւնն ու համակարգի անդամալուծումը, առընթեր՝ քաղաքացիական շարժումներու վերայառնումի փորձերը, զուգորդուած լիբանանեան դրամանիշի անկումի կտրուկ արագակշռոյթ մրցանիշներ գրանցելով՝ քառսի խորացման նոր ուղենիշներ կը փոխանցեն: Այս բոլորին զուգահեռ Լիբանան կը ժամանէ Կեդրոնական դրամատան կառավարիչի արտերկրի հաշիւներու հետաքննութիւնը կատարող քննիչներու խումբը:

Նաւահանգիստի պայթումի թղթածրարը ստանձնած դատաւորի ամբաստանագիրները կը շօշափեն ամենէն բարձր առաստաղի վրայ գրուած անձնաւորութիւններու անուններ: Առանց վիճարկելու ապահովական եւ իրաւապահական բարձրագոյն մարմիններու ղեկավարներու առնչութիւնը կամ մեղադրանքը, նման իրաւական ընթացակարգ մը եւ անոր հետեւող վճիռները փաստօրէն կը ջլատեն արդէն իսկ պետական անդամալուծ համակարգի եւս երկու ոլորտ՝ ապահովական եւ իրաւապահ իշխանութիւններուն վերապահուած մարգերը:

Ի՞նչ արդիւնք կ'ունենանք այդ պարագային: Նախագահական թափուր աթոռ, հրաժարած վարչապետ եւ կառավարութիւն, որուն պարագայական նիստերը կարելոր հատուածի կողմէ կը նկատուին անվաւեր, մէկ օրակարգ իրականացնելու լիազօրութիւն ունեցող եւ չհամաձայնող խորհրդարան, ֆինանսական առումով Կեդրոնական դրամատուն մը, որ փաստօրէն դադրած է իրականացնելէ այն նուազագոյն վերահսկողութիւնը, որ կը փորձէր՝ զսպելու համար լիբանանեան դրամանիշի անարգել արժեզրկումը, ջլատուած արդարադատական իշխանութիւն եւ նման վճիռներու գործադրութեան պարագային գլխատուած ապահովական ու իրաւական ոլորտներ:

Կը մնայ միայն բանակը, իբրեւ միաւոր, որ պետք է իրականացնէ պետութենէն ակնկալուած բոլոր գործառնոյթները:

Ծովային սահմանագատման լիբանանեան համաձայնութիւնը կը թուէր, որ հանգուցալուծման գործընթացի կարելոր ելակետ պիտի նկատուէր: Միացեալ Նահանգներու միջնորդութեամբ եւ ուղղակի-անուղղակի խոստումներով երաշխաւորուող համաձայնութիւն մը, որուն դիմաց տնտեսական բարելաւումի յոյսեր կը փայփայուէին:

Լիբանանը չի կրնար սկսիլ իր ծովային տարածքներուն մէջ գտնուող ուժանիւթի պեղումին, արտահանումին եւ յանձանումի գործընթացին: Չկայ վաւերականութիւն ունեցող գործադիր իշխանութիւն, որոշում կայացնելու իրաւականութիւն ապահոված կառավարութիւն եւ նախագահ:

Միւշ, ակնկալութիւններու, ջնջելու համար նախապայմաններու քաղաքականութիւնը կը շարունակուի: Նաւահանգիստի պայթումի հետաքննութեան վերագործարկման վերաբերող լուրը լոյս կը սփռէ իրադարձութիւններուն շարժառիթներուն վրայ: Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանքեր Նետ Փրայս, անդրադառնալով դատաւոր Պիթարի կողմէ Պէյրութի նաւահանգիստի պայթումին հետաքննութիւնը վերսկսելու որոշումին, յայտնած է, որ Միացեալ Նահանգներ կը զօրակցին եւ կոչ կ'ուղղեն լիբանանեան իշխանութիւններուն շարունակելու հետաքննութիւնը, եւ արագ ու թափանցիկ կերպով վարուելու հետաքննութեան ընթացքին: Նմանատիպ յորդորով հանդէս եկած է նաեւ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանութիւնը: Յիշենք նաեւ, որ նախապէս, խնդրոյ առարկայ դատաւորի լիազօրութիւններու կատարման եւ դադրեցման պահանջներու արանքին, Ուաշինկթընը որոշուած էր թղթածրարը ստանձնած դատաւորին խիզախութիւնը՝ երկրին մէջ արդարութիւն կիրարկելու անոր նախանձախնդրութիւնը ընդգծելով:

Կը թուի, որ Լիբանանի դէմ կիրարկուող ճնշամիջոցներու թիրախին յայտնուած են ապահովական մարմինները: Նաւահանգիստի պայթումի հետաքննութիւնը, ֆինանսական քառասուցումի տանող նոր տուեալները, արդարադատութեան եւ ընդհանրապէս պետական համակարգի պառակտուածութիւնը, քաղաքացիական անհնազանդութեան վերադարձուումները, անտեսանելի թելերով իրար ազուցուած ճնշումի գործոններ են, որոնց մասին բացայայտ յայտարարութիւններ հրապարակելու չեն վարանիր վիշազգային զբաւոր խաղողները:

«Ա.»

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ՓՈՒԼ ԿՈՒ ԳԱՅ



Լիբանան կը գտնուի ամբողջական քառսի դիմաց՝ նկատի ունենալով երկրի տարբեր ոլորտներուն տագնապալի իրավիճակը, լիբանանցիներուն դիմագրաւած մարտահրաւերներն ու քաղաքացիի ապրուստին սպառնացող վտանգները:

Քաղաքական, ելեւմտական, տնտեսական ու ընկերային մարգերուն դիմագրաւած տագնապներուն վրայ աւելցաւ նաեւ դատական իշխանութիւններուն պարզած ներկայ իրավիճակը:

Այս բոլորը ի յայտ եկան, երբ Պէյրութի նաւահանգիստի պայթումի հետաքննութեան պատասխանատու դատաւոր Թարեք Պիթար մէկ տարի եւ մէկ ամիս լուրսէն ետք ուղղուեցաւ իր գրասենակը՝ յայտարարելով, որ ինք պիտի վերստանձնէ իր աշխատանքը, որուն իսկոյն ձեռնարկեց հրապարակելով կոչնագիրներ՝ սկսելով Ընդհանուր դատախազէն, հասնելով՝ ապահովական կառոյցներու պետներուն եւ դատաւորներուն:

Պիթարի առած այդ քայլով ելեւտրականացած մթնոլորտը նախորդ 48 ժամերուն աւելի եւս բարդացաւ, երբ ընդհանուր դատախազ Ղասսան Օուէյտաթ որոշեց ազատ արձակել Պէյրութի նաւահանգիստի պայթումին առնչութեամբ ձերբակալուած բոլոր արգելափակեալները՝ պայմանով որ անոնք չմեկնին Լիբանանէ:

Բայց եւ այնպէս Պէյրութի նաւահանգիստի ապահովութեան եւ անվտանգութեան պետ Մոհամետ Չիատ Աուֆ չորեքշաբթիէն հինգշաբթի լուսնոյ գիշերուան ընթացքին մեկնեցաւ Միացեալ Նահանգներ:

Օուէյտաթ Պիթարը ամբաստանեց Վճռաբեկ ատենակի ընդհանուր խորհուրդին դիմաց եւ դատավարութեան կանչեց զայն, ինչպէս նաեւ արգիլեց անոր մեկնումը Լիբանանէ:

Պիթարին դէմ արձակուած ամբաստանագիրէն օրինակ մը յանձնուեցաւ Ղասսանի իշխանութեան քննչական խորհուրդի նախագահին, Օուէյտաթի կողմէ:

Շար.ը՝ էջ 2

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐԸ ԲԱՆԱՁԵԻՈՎ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵՆ ՊԵՅՏՆԵՐ ՂԱԴՐԵՑՆԵԼՈՒ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱԶՐԱԷՅՃԱՆԻՆ

Ամերիկացի քննկրեսական Ֆրենք Փալոն, հայկական հարցերով յանձնախումբի անդամներ Տէյվիտ Վալատաօ, Կաս Պիլիքաքիս, Էտըմ Շիֆ եւ Պրետ Շերմըն շրջանառութեան մէջ դրած են Ազրայէճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի հայերու շրջափակումը եւ մարդու իրաւունքներու շարունակական խախտումները դատապարտող բանաձեւ՝ կոչ ուղղելով նախագահ Ժօ Պայտընի անյապաղ դադրեցնելու Միացեալ Նահանգներու ռազմական եւ անվտանգային աջակցութիւնը Ազրայէճանին եւ ամբողջութեամբ կիրարկելու Ազատութեան աջակցութեան աքթի 907-րդ բաժինն ու Միացեալ Նահանգներու մարդասիրական աջակցութիւն տրամադրելու Լեռնային Ղարաբաղի հայ տուժածներուն:

Շար.ը՝ էջ 8

ԱՐՑԱԽԻ ՆԵՐԿԱՅԱՑՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԲԱՆԱՏԱՅԻ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻՆ ՄԷՁ ԱԶՐԱԷՅՃԱՆԻ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՓԱՍՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՑՈՒՑԱԾ ԵՆ

ՀՀԴ Զանաւայի Հայ դատի յանձնախումբի տեսական աշխատանքներուն շնորհիւ 25 յունուարին Զանաւայի Համայնքներու պալատի արտաքին յարաբերութիւններու եւ միջազգային զարգացման մնայուն յանձնախումբը գումարած է երկու առանձին նիստեր:



ՀՀԴ ԲԻՐՈՐՑԻ ՀԱՅ ՀԱՏԻ ԿԵՐՈՐՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

Շար.ը՝ էջ 8

ՀՐԱՍԱՅԼԵՐՈՒ ՄԱՏԱԿԱՐԿՐՄԱՆ ԽՈՍՏՈՒՄԸ ՄՊԱՅՈՎԵԼ ԵՏԸ

ՉԵԼԵՆԱՔԻ ՕԹԱՆ-ԷՆ ՀԱՆԱԾԻՉՆԵՐ ԿԸ ԽՆԴԻԷ

Արեւմտեան երկիրներու կողմէ Ուքրանիոյ հրապարակէր մատակարարելու մտադրութեան մասին յայտարարութիւնները, Ուքրանիոյ նախագահ Վլադիմիր Չելենսքի սկսած է հրթիռներ եւ օդանաւեր եւս խընդրել: Այս մասին կը գրէ «ՌԻԱ Նովոսթի»-ն՝ յղում կատարելով Ուքրանիոյ նախագահի գրասենակի կայքին:



«Այսօր եւ խօսած եմ ՕԹԱՆ-ի ընդհանուր քարտուղար Եւս Սթոյթենպերկի հետ: Մենք պետք է ապաշրջափակենք Ուքրանիոյ հեռահար հրթիռներու մատակարարումը. մեզի համար հրետանիի ոլորտին մէջ համագործակցութիւնը ընդլայնելը կարեւոր է, մենք պետք է հասնինք Ուքրանիոյ օդանաւերու մատակարարման», նշուած է կայքին մէջ հրապարակուած յայտարարութեան մէջ:

Ուքրանիոյ պաշտպանութեան նախարարի խորհրդական Եուրի Սաք նշած է, որ Ուքրանիան կ'ուզէ Արեւմուտքէն հալածիչներ ստանալ: «Եթէ մենք գտնուք ստանալը, մարտի դաշտին մէջ առաւելութիւնը հսկայական պիտի ըլլայ: Անոնք պարզապէս «ԷՃ-16»-ներ չեն. չորրորդ սերունդի օդանաւերը այն են, ինչ որ մեզի անհրաժեշտ է», ըսած է ալ «Ռոյթըրզ» լրատու գործակալութեան հետ գրոյցի ընթացքին:

Նշենք, որ Միացեալ Նահանգներու նախագահ Ճօզէ Դայտըն չորեքշաբթի երեկոյեան Սպիտակ տան մէջ յայտնել մամուլի ասուլիս հրապարակել յայտարարեց. «Ուքրանիոյ «ԷՄ 1 Ապրամզ» մակնիշի հրապարակէր տրամադրելու մասին որոշումը արդէն իսկ իրականութիւն է»:

«Այսօր եւ կը յայտարարեմ՝ Միացեալ Նահանգներ Ուքրանիոյ 31 «ԷՄ 1 Ապրամզ» մակնիշի հրապարակէր ուղարկել:

Շար.ը՝ էջ 8

ԱՅՍՊԵՍ Ե ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

Չորեքշաբթի օր, լիբանանահայ քաղաքացիին մէկ կողմ դրած իր սեփական տագնապներն ու երկրի դիմագրաւած զանազան դժուարութիւնները, ընդառաջեց հայկական կուսակցութեանց կոչին եւ Պէքայթի Պուրճ Յամուտ, ու հայահոծ շրջաններ իր միացեալ խօսքը ուղղեց մերժելով ազրայէճանաթրքական հայաթափման եւ ցեղային գտման քաղաքականութիւնը եւ զօրակցելով առանձինս պայքարող Արցախին:

Փակուեցան ազգային, միութենական հասարակական կրթական հաստատութիւնները խորհրդանշական կերպով երկու ժամ:

Հայ մարդիկ փակեցին իրենց հաստատութիւնները, իսկ պաշտօնեաներ բացակայեցան իրենց գրասենակներէն:

Պուրճ Յամուտի մէջ թէ Այնճարի, յուզիչ էր մթնոլորտը:

Հոն էին տարեքն ու դպրոցական աշակերտը, գործատներն ու բանուորը, գիւղացի մշակն ու համալսարանի դասախօսը: Հոն էին համայնքներու կրօնական թէ աշխարհական ներկայացուցիչներ, քաղաքական դէմքեր, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութիւնը, քահանաներ եւ եկեղեցւոյ սպասարկուներ, մեր հասարակական կենսքի գործունեայ տարրեր:

Հոն էին մանկապարտեզի աշակերտներ եւ դպրոցականներ իրենց ուսուցիչներով եւ տնօրէններով, համալսարանական ուսանողներ թէ դասախօսներ:

Հայահոծ շրջաններու հայ գործատերերու կողքին, իրենց հաստատութիւնները փակած էին նաեւ ոչ հայ անհատներ, որոնք յարգած էին ու կը զօրակցին մեր պահանջին:

Լիբանանի պետութիւնը արտաքին գործոց նախարարութեան ճամբով իր պաշտօնական կեցուածքով կոչ ուղղած էր վերաբանալու Բերճորի միջանցքը:

Պատկառելի էր ներկայութիւնը: Չափազանցութիւն չէ նկատել, որ Արցախի շրջափակումէն 44 օր ետք, մեծագոյն հանրահաւաքն էր աշխարհով մեկ, որ տեղի ունեցաւ Պուրճ Յամուտի մէջ:

Լիբանանի հայ քաղաքացիին անգամ մը եւս համոզումով կատարեց իր հայու պարտականութիւնը՝ զօրակցելով արցախցի բազմաչարչար իր եղբոր:

Շատեր բացակայեցան, չուզեցին զօրակցիլ, զանազան պատրուակներ առաջ բռնեցին, աւելին ակնկալեցին (աւելին ժամանակ ալ բացակայած են), սակայն կարելորդ այն է, թէ Լիբանանի հայութիւնը իր խօսքը ըսաւ խիզախութեամբ եւ իր զօրակցութիւնը արտայայտեց բարձր բռնկեցով:

Թէ այս պայքարը պետք է ընդլայնի, անկասկած:

Թէ զօրակցական հաւաք մը անբաւարար է առանձնաբա՞ր, այո՛:

Թէ այս հաւաքով Ազրայէճան պիտի չբանայ Բերճորի միջանցքը, անշուշտ:

Սակայն կարելի՞ է լուռ մնալ:

Կարելի՞ է չիշել, չընդգիլ, կարելի՞ է կորսնցնել Լիբանանի հայ մարդու մարտունակ ոգին, վստահաբար ոչ:

Պիտի շարունակենք հաւատալ յարատեւ կռիւի զաղափարին:

Տկարութիւնը տեղ չունի Լիբանանի հայութեան մէջ:

Այսպէս ենք մենք եւ այսպէս պիտի մնանք:

Մեր տեղական ցաներն ու տագնապները կ'ապրինք, բայց չենք կրնար անտարբեր մնալ համայն հայութեան սպառնացող հայաջինջ վտանգին նկատմամբ:

Այսպէս է Լիբանանի հայութիւնը:

Վարձքը կատար կամքը ամուր պահող հաւատաւոր մեր ժողովուրդին:

Յ. ԲԱԳՐԱՏՈՐԻ

ՖՐԵՆԺԻԷ ԵՒ ՊԱՍԻԼ ՅԱԶՈՐԴԱՔԱՐ ԱՅՅԵԼԵՑԻՆ ՌԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երեկ Պքերքի մէջ ընդունեց Մարատա հոսանքի ղեկավար Սլէյման Ֆրենժիէն, որուն հետ ըննարկեց լիբանանեան իրադարձութիւնները:



Հանդիպումէն ետք Ֆրենժիէն յայտնեց, որ Թաէֆի համաձայնագիրի պարագային իրենց դերակատարութիւնը հիմնական է՝ աւելցնելով, որ իր սահմանադրական իրաւունքն է նախագահական ընտրութեան իր թեկնածութիւնը առաջադրել:

Ֆրենժիէն Նշեց, որ քրիստոնէութիւնը իրենց համար ուրիշին նկատմամբ բացուիլ է, ներողամտութիւն է եւ երկխօսութիւն:

«Կը ջանամ եւ կը փափաքիմ ներկայանալ նախագահական ընտրութեան իբրեւ համախոհական թեկնածու: Կ'ուզեմ ընդգծել, որ թեկնածութիւնս տակաւին չեմ առաջադրած, որպէսզի գայն յետս կոչեմ, եւ երբ որ շօշափեմ, թէ կան բաւարար ջուէներ, որոնք կրնան զիս լուրջ թեկնածու դարձնել, ապա պիտի առաջադրեմ թեկնածութիւնս»: Ըսաւ ան՝ աւելցնելով, որ ինք չի մերժեր, որ ռեւ նախագահական թեկնածուի շուրջ համախոհութիւն գոյացուի:

Ֆրենժիէն ըսաւ, որ իրենք թեր պիտի չքուտարկեն երեսփոխան Սիշել Մուաուատին, սակայն եթէ ան հանրապետութեան նախագահ ընտրուի, ապա պիտի գործակցին անոր հետ:

Աղորդաբանարկով Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պա-

սիլի կողմէ իր թեկնածութեան նկատմամբ ցուցաբերած մերժումին՝ Ֆրենժիէն յայտնեց, որ Պասիլ իր պատճառները ունի, որովհետեւ այդ իրականութիւնը շատ աւելի է, քան հանդուրժելու իր կարողութիւնը:

Ֆրենժիէն ընդգծեց, որ ինք բանակի հրամանատար զօր. Ժոզեֆ Աունի թեկնածութեան դէմ չէ՝ հարց տալով անոր քաղաքական ծրագիրին մասին:

«Ես չեմ փափաքիր մարտահրաւերի նախագահ ըլլալ, իսկ մեծամասնութիւնը կարիք ունի 65 քուէի, հետեւաբար կը հաստատենք, թէ ես, ուրիշը կամ ռեւ մէկը չեն կրնար հանրապետութեան նախագահ ընտրուիլ», ըսաւ ան:

Միս կողմէ, Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պասիլ նախանցեալ երեկոյեան այցելեց Պքերք, ուր հաստատեց, որ առանց հանրապետութեան նախագահի ընտրութեան կարելի չէ լուծման մը յանգիլ, եւ դարձեալ երկխօսութեան եւ համախոհութեան կոչ ուղղեց:



Ռայի պատրիարքին հետ ունեցած երկարատեւ հանդիպումէն ետք Պասիլ Նշեց, որ հանդիպումը եղած է դրական եւ արդիւնաւետ՝ աւելցնելով, որ կիրակի կէսօրին մանրամասն եւ ընդարձակ կերպով պիտի յայտարարէ Ազգային ազատ հոսանքի կեցածքները:

ԴԵՍՊԱՆ ԱԹԱՔԷԿԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ԺԸՊՐԱՆ ՊԱՍԻԼԻ

Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Վահագն Աթաթէկեան նախանցեալ օր այցելեց Ազգային ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պասիլի, որուն հետ ըննարկեց հայ-լիբանանեան յարաբերութիւնները եւ շրջանային հարցեր:

Դեսպան Աթաթէկեան անդրադարձաւ Բերժորի միջանցքին փակման շուրջ զարգացումներուն, անոր ունենալիք վտանգներուն եւ պատճառած մարդկային աղետալի հետեւանքներուն:



ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

●ՍԵՒ շուկային մէջ ամերիկեան տոլարին փոխարժեքը 62.300 լ. ոսկի է:

●Ուժանիւթի նախարարութեան որոշումով այսուհետեւ վառելանիւթի սակացոյցը օրական երկու անգամ պիտի հրապարակուի. առաւօտեան ժամը 9:00-ին եւ կէսօրէ ետք ժամը 4:00-ին: Վառելանիւթի նոր սակացոյցին համաձայն, 95 օքթան պենզինի սակը սղած է 48.000 լ. ոսկիով, 98 օքթան պենզինը՝ 50.000 լ. ոսկիով, մագուլթը՝ 50.000 լ. ոսկիով, իսկ պիւրակալը՝ 31.000 լ. ոսկիով: Հետեւաբար վառելանիւթի նոր սակացոյցին համաձայն, 95 օքթան պենզինի թիթեղին սակն է 1.087.000 լ. ոսկի, 98 օքթան պենզինը՝ 1.114.000 լ. ոսկի, իսկ մագուլթը՝ 1.139.000 լ. ոսկի եւ պիւրակալը՝ 695.000 լ. ոսկի:

●ՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ եւ առեւտուրի նախարարութիւնը արաբական հացին համար ճշդեց նոր սակացոյց, որուն համաձայն 1 փոքր կապ արաբական հացին սակն է 14.000 լ. ոսկի, միջակ կապը՝ 24.000 լ. ոսկի եւ մեծ կապը՝ 29.000 լ. ոսկի:

●ՎԱՐԶԱՊԵՏԻ պաշտօնակատար Նեժիպ Միքաթի հրապարակեց հրամանագիր մը, որուն համաձայն, հինգշաբթի, 9 փետրուարին եւ երեքշաբթի, 14 փետրուարին, Լիբանանի պետական հաստատութիւններն ու քաղաքապետարանները փակ կը մնան Մար Մարունի տօնին եւ նախկին վարչապետ Ռաֆիք Հարիրիի եւ անոր ընկերակիցներուն սպանութեան 18-ամեակին առիթով:

●ԱԶԳԱՅԻՆ ազատ հոսանք կուսակցութեան քաղաքական խորհուրդը կոչ ուղղեց լիբանանցիներուն պատրաստուելու իսկական եւ գիտակից ըմբոստութեան մը՝ ընդդէմ երկրին կառուցները քանդող դասին:

●ՀԱՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ միւլֆթի շէյխ Ապտէլ Լաթիֆ Տըրիան ընդունեց Լիբանանի մէջ Սեւտական Արաբիոյ դեսպան Ուալիտ Պուխարին, որուն հետ ըննարկեց լիբանանեան իրադարձութիւններն ու նախագահական ընտրութիւնը ճշդուած թուականին կատարելու կարելիութիւնը:

●ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ նախագահ Նեպիի Պըրրի ընդունեց առողջապահութեան նախարարի պաշտօնակատար Ֆիրաւ Ապիատը, որուն հետ ըննարկեց ընդհանուր իրավիճակն ու երկրին առողջապահական եւ բժշկական մարզերը յուզող հարցերը:

●ՊԵՏԱՊԱՆԻԹԵԱՆ նախարարի պաշտօնակատար Մորիս Սլիմ շէշտեց, որ լիբանանեան բանակի

հրամանատարը օրինազանցութիւններ կը կատարէ՝ աւելցնելով, որ եթէ ան իր այս ընթացքով շարունակէ, ապա ինք կառավարութենէն պիտի պահանջէ պաշտօնազրկել գայն:

●ԼԻՔԱՆԱՆԵԱՆ բանակի հրամանատար զօր. Ժոզեֆ Աուն Միացեալ Նահանգներու եւ ՄԱԿ-ի հետ աշխատանքիստի մը ընթացքին յայտնեց, որ լիբանանեան բանակը մեծ թիւով մարտահրաւերներ դիմագրաւած է եւ կրցած է տոկալ, «սակայն այս տագնապը ամենէն վտանգաւորն է», ըսաւ ան: Իր կարգին, Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տորքթի Շիա յայտնեց, որ ամերիկեան Քոնկրեսը համաձայնութիւն յայտնած է Ներքին ապահովութեան ուժերուն եւ լիբանանեան բանակին կատարելիք նիւթական իր օժանդակութիւնը շարունակելու:

●ԱԶԳԱՅԻՆ ազատ հոսանք կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժըպրան Պասիլ Միքաթիի մէջ ընդունեց Արժանապատուութիւն հոսանքի նախագահ, երեսփոխան Ֆայսալ Զարամին, որուն հետ ըննարկեց լիբանանեան իրադարձութիւնները: Հանդիպումէն ետք Զարամը լիբանանեան քաղաքական ուժերուն միջեւ ընդարձակ երկխօսութիւն պահանջեց՝ աւելցնելով, որ հանրապետութեան նոր նախագահին շուրջ պէտք է համախոհութիւն գոյացուի, որպէսզի երկրին փրկութեան դռները բացուին:

●ԺՈՐՈՐԴԱՎԱՐԱԿԱՆ հանդիպում պլոքի երեսփոխան Ռաւէ Ապու Ֆաուր յայտնեց, որ նախագահական ընտրութեան իրենց թեկնածուն երեսփոխան Սիշել Մուաուատն է՝ աւելցնելով, որ Մուաուատը չըլլալու պարագային պէտք է ուղղուիլ համախոհութեան: Ան անդրադարձաւ դատական իշխանութեան պարզած իրավիճակին՝ զգուշացնելով, որ դատական իշխանութեան փլուզումը լիբանանեան պետութեան ամբողջական փլուզման կ'առաջնորդէ, որովհետեւ անկիւս է միակ հիմնասիւնը, որ տակաւին ոտքի կը պահէ պետութիւնը:

●ՓԱՐԱՆԱԺՈՐԿ Լուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամի Ժմայէլ այցելեց Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան ղեկավար Ուալիտ Ժամպլաթի՝ ներկայութեամբ երեսփոխան Թայմուր Ժամպլաթի: Ըննարկութեան լիբանանեան իրադարձութիւնները, յատկապէս քաղաքական զարգացումները: Միս կողմէ, Ժմայէլ Փաղանգաւոր կուսակցութեան Սայֆիի կեդրոնատեղիին մէջ ընդունեց Լիբանանի

Շար. ը՝ Է 8

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

Օուլէտաթ Նշեց, որ ինք չի նախատեսեր, որ Դատական իշխանութեան գերագոյն խորհուրդի օրակարգը ընդգրկէ Պիթարը պաշտօնազրկելու յատուկ կէտ մը՝ աւելցնելով սակայն, որ ինք կը նախատեսէ, որ Պիթար յառաջիկայ օրերուն յաւելեալ սխալներ եւ օրինազանցութիւններ կատարէ:

Պիթար յայտնեց, որ ինք պիտի շարունակէ իր պատասխանատուութիւնը իբրեւ հետաքննիչ դատաւոր՝ աւելցնելով, որ Օուլէտաթ ոչ մէկ որոշում կըրոնայ տալ դատական այս թղթածրարին գծով:

Ան նկատել տուաւ, որ ինք պիտի շարունակէ հետաքննութիւնը եւ կոչ-նազիրով հրաւիրուած ամբաստանեալները պիտի հարցաքննէ ճշդուած թուականներուն՝ շէշտելով, որ Օուլէտաթ ապօրինի քայլի մը դիմած է այս իմաստով:

Պիթար նկատել տուաւ նաեւ, որ եթէ ապահովութեան ուժերը գործադրեն Ընդհանուր դատախազին որոշումը եւ ազատ արձակեն արգելափակեալները, ապա անոնք օրէնքը շրջանցած պիտի ըլլան:

Վարչապետի պաշտօնակատար Նեժիպ Միքաթի հրապարակեց երկու հրամանագիրներ, որոնց հիման վրայ ազատ արձակուած Ա. Կարգի պաշտօնեաներէն պահանջեց իրենք զիրենք զետեղել վարչապետին տրամադրութեան տակ, իսկ Ա. Կարգ չեղող պաշտօնեաներէն պահանջեց իրենք զիրենք զետեղել համապատասխան նախարարներուն տրամադրութեան տակ:

Միս կողմէ, նաւահանգիստի պայթումի զոհերու ընտանիքներուն անուով խօսք արտասանեց Ուիլիմ Նուն, որ հաստատեց, թէ Օուլէտաթ արդարադատական իր ասպարեզը քանդած է այս որոշումով:

Ան շէշտեց, որ 4 օգոստոսի պայթումին հարցը վերածուած է իրարու հետ հաշիւներ մաքրելու թղթածրարի, եւ այդ մէկը ցաւալի է:

Նուն Նշեց, որ իրենք հինգշաբթի օրուն Դատական իշխանութեան գերագոյն խորհուրդի նիստին ընթացքին Արդարութեան պալատին դիմաց պիտի կանգնին՝ սպասելով որոշումի մը: Անոնք կոչ ուղղեցին լիբանանցիներուն միանալու իրենց նստացոյցին, որպէսզի կարենան դիմադրել օրէնքին դէմ գործուած յեղաշրջումին:

Այս առիթով արձանագրուեցան լիբանանեան քաղաքական անձնաւորութիւններու մեկնաբանութիւններ: Այդ շրջագիծին մէջ Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամի Ժմայէլ յայտնեց, որ լիբանանցիները պէտք է պատրաստ ըլլան դէմ դնելու անարդարութեան՝ զարմանք յայտնելով, որ Հիզպալլա սկսած է դատական օրակարգով դասեր տալ:

Իր կարգին, Թաուհիտ հոսանքի ղեկավար Ուիլիմ Ուահապ շէշտեց, որ Պիթար Այն Ռըմմանէի նոր փոխադրատար մըն է՝ շէշտելով, որ իրենք պիտի չարտօնեն, որ երկիրը քանդուի:

Չորեքշաբթի օրուն վերոնշեալ իրադարձութիւններէն ետք, հինգշաբթի կէսօրուն ժամը 12:00-ին նաւահանգիստի պայթումի զոհերու հարազատները ուղղուեցան Պէյրութի Արդարութեան պալատ, ուր Դատական իշխանութեան գերագոյն խորհուրդը իր նիստը պիտի գումարէր, եւ փորձեցին ճամբաները երկու ուղղութեամբ փակել:

Անոնք ընկերակցեցան նաեւ Կարգ մը երեսփոխաններ՝ Փոփոխութեան երեսփոխաններէն:

Գրեթէ կէս ժամ ետք երեսփոխան Ատիպ Ապտէլ Մասիի յայտնեց, որ ինք եւ երեսփոխաններ Ռատտահ Սատք եւ Դասսան Հասպանի խոշտանգումի ենթարկուած են արդարութեան նախարարի պաշտօնակատար Հանրի Խուրիի թիկնապահներուն կողմէ՝ պահանջելով Խուրիի հրաժարականը:

Այս դէպքէն վայրկեաններ ետք նստացոյցը կ'աւարտուէր պիտի փորձեցին ներխուժել Արդարութեան պալատ եւ ապահովութեան ուժերուն հետ իրենց ունեցած բախումներէն ետք կրցան քանդել Արդարութեան պալատի մուտքի երկաթեայ դարպասը:

Ապահովութեան ուժերը փորձեցին ցրուել ցուցարարները՝ օգտագործելով արցունքաբեր կազեր:

Ցուցարարներուն եւ ապահովութեան ուժերուն միջեւ արձանագրուած բախումներուն պատճառով ապահովութեան ուժերը ձերբակալեցին իրաւաբան Ուասեֆ Հարաքէն, որ քիչ անց ազատ արձակուեցաւ:

Միս կողմէ, երեսփոխան Դասսան Հասպանի եւ այլ երեսփոխաններ հանդիպում մը ունեցան Դատական իշխանութեան գերագոյն խորհուրդի նախագահ, դատաւոր Սուհեյ Ապպուտի հետ: Հանդիպումէն ետք Հասպանի յայտնեց, որ Ապպուտի հետ հանդիպումը լաւ ընթացած է՝ աւելցնելով, որ դատական իշխանութիւնը պիտի գործէ իր ամբողջական անկախութեամբ:

Ան շէշտեց, որ բոլորը պէտք է պաշտպանեն Պէյրութի նաւահանգիստի պայթումին թղթածրարը դատաւոր Պիթարի իրաւասութեան մէջ պահելու հանգամանքը:

Իր կարգին, երեսփոխան Մարք Տաու արտասանեց խօսք մը եւ Իրաւաբաններու սենտիքայէն յստակ կեցածք մը պահանջեց պաշտպանելու Պիթարի դերակատարութիւնը:

Արդարութեան նախարարի պաշտօնակատար Հանրի Խուրի ցաւ յայտնեց կարգ մը երեսփոխաններու հետ իր հանդիպումին ընթացքին տիրած մթնոլորտին համար՝ աւելցնելով, որ կարեւոր է լիբանանեան հանրային կարծիքը տեղեակ պահել, թէ հանդիպումին ընթացքին երեսփոխանները դժբախտաբար կորսնցուցած էին քաղաքակրթութեամբ հաղորդակցելու եւ զրուցելու իրենց կարողութիւնը, յատկապէս Ռատտահ Սատքը, որ վարկաբեկիչ խօսքեր արտասանեց արդարութեան նախարարի պաշտօնակատարի հասցէին:

Յետմիջօրէի ժամը 3:00-ին, Դատական իշխանութեան գերագոյն խորհուրդը ընչեց իր նիստը, որովհետեւ խորհուրդին անդամ 6 դատաւորներ մերժեցին ժողովրդային ճնշումին ներքեւ նիստ գումարել:

Նշեց, որ Օուլէտաթ երեկ հրապարակեց որոշում մը, որուն համաձայն դատաւոր Պիթարէն ոչ մէկ փաստաթուղթ պէտք է ստանձնել՝ նկատել ունենալով, որ ան որեւէ կապ չունի Պէյրութի նաւահանգիստի պայթումին հետաքննութեան հետ:

Օուլէտաթ հարցազրոյցի մը ընթացքին շէշտեց, որ եթէ Պիթարի գործունեութիւնը որոշն ինչ կը համապատասխանէ դատական իշխանութեան օրէնքին, ինք պատրաստ է յետս կոչելու իր որոշումը:

Ան հաստատեց, որ Պէյրութի նաւահանգիստի պայթումին հետաքննութիւնը պիտի վերսկսի մեծ սխալը սղորագրելէ ետք:

Իսկ Պիթար իր կարգին հաստատեց, որ ինք կը մերժէ Օուլէտաթի կողմէ դատավարութեան ենթարկուիլ՝ ընդգծելով, որ ինք իր աշխատանքը պիտի շարունակէ իբրեւ նաւահանգիստի պայթումի հետաքննութեան պատասխանատու դատաւոր:

Պէտք է աւելցնել, որ երեկուն ղեպքերուն մասին վարչապետի պաշտօնակատարը հաստատեց, որ դատական իշխանութիւններուն մօտ յառաջացած երկփեղկումը վտանգաւոր հետեւանքներ կրնայ ունենալ՝ աւելցնելով, որ ինք պիտի շարունակէ կառավարութիւնը նիստերու հրաւիրել շտապ հարցերու լուծում ապահովելու նպատակով:

ԱՖԻԼ AFIL

DIET CENTER
Get healthy and in shape with specialized dietitian
Nani Kalousdian
(AUB graduate)

For Appointments call:
79 321 738

Arin Center, Bourj Hammoud, Tel.: 01 242556
Aghpalian Center, Mezer, Tel.: 04 712342
www.afil.com

31 ՀԱԶԱՐ ՏՈԼԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԵՑԱԻ ՀՅԳ «Ն. ԱՂԲԱԼԵԱՆ» ԿՈՄԻՏԵԻ ԶԵՌՆԱՐԿԻՆ

Յինգշաբթի, 5 յունւար 2023-ին Ազգային առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Ծննդեան տօնին առիթով ՅՅԳ «Ն. Աղբալեան» կոմիտէին կազմակերպած ճաշկերոյթը, որուն ներկայ գտնուեցան՝ ՅՅԳ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ հայկական երեսփոխանական պլոքի անդամներ, ուղեկից միութիւններու ներկայացուցիչներ, «Ն. Աղբալեան» եւ այլ կոմիտեութեանց անդամներ, Անթիլիասի եւ Սըզդեի շրջանի բնակիչներ եւ մեծ թիւով երիտասարդներ:

Երեկոն խանդավառեց երգիչ Յակոբ Սկրտիչեան՝ մենկաբանելով ժողովրդային, ազգային եւ յեղափոխական երգեր:

«Ն. Աղբալեան» կոմիտէի անունով խօսք առաւ

Յակոբ Տէր Ղուկասեան, որ անդրադարձաւ կոմիտէին ծաւալած գործունեութեան եւ ժողովուրդի հետ կապին՝ տարբեր բնագաւառներու մէջ:

Այս առիթով «Ն. Աղբալեան» կոմիտէի 2023 տարեշրջանի ծրագիրներու իրականացման առ ի գօրակցութիւն, ներկաներու կողմէ կատարուեցան սրտաբուխ նուիրատուութիւններ՝ գոյացնելով 31 հազար ամերիկեան տոլարի հասոյթ մը:

«Ն. Աղբալեան» կոմիտէն շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր նուիրատուներուն եւ բարեկամներուն, որոնք անսացին իր հրաւերին եւ իրենց նիւթական զօրակցութեամբ քաջալեր հանդիսացան կոմիտէի յառաջիկայ աշխատանքներուն:

ՀՅԳ ԱՂԲԱԼԵԱՆ ԿՈՄԻՏԵ

«ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՒԵՍ»-Ի 2022 ՏԱՐՈՒԱՆ ԶՈՅԳ ԳԻՐԲԵՐՈՒՆ ԸՆՈՐՀԱՀԱՆՐԱՒԵՍԸ

Յինգշաբթի, 19 յունւար 2023-ի երեկոյեան Յայկազեան համալսարանի հանդիսարանին մէջ տեղի ունեցաւ «Հայկազեան Յայագիտական Հանդէս»-ի (ՀՀՀ) 2022 տարւան (42-րդ հատոր) զոյգ գիրքերուն (42/1 եւ 42/2) շնորհահանդէսը՝ ներկայութեամբ Յայկազեան համալսարանի Նախագահ վեր. դոկտ. Փոլ Յատոսթեանի, հանդէսի ինսպեկտ աշխատակից, Յայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու ազգային ակադեմիայի արտասահմանեան անդամ, պատմաբան, պատուակալ դոկտ. Զաւեն Սըըրեանի, Միսիթարեան միաբանութեան փունջ մը անկերու, հիւրերու, բարեկամներու եւ հանդէսի խմբագրակազմի անդամներուն:

Բացման խօսքին մէջ հանդէսի խմբագիր դոկտ. Արմէն Իւրնէշլեան հրաւիրեց ներկայները յոտնկայս լռութեամբ յարգելու յիշատակը հանդէսի խմբագրակազմի, ապա եւ խորհրդատու մարմինի անդամ, հանգուցեալ ժիրայր Դանիէլեանի յիշատակը, որմէ ետք ան նշեց, որ 42-րդ հատորէն սկսեալ հանդէսը լոյս պիտի տեսնէ մէկ հատոր-երկու գիրք դուրսբերմբ: Դոկտ. Իւրնէշլեան արձանագրեց ընթացիկ հատորով սկսող նորութիւնները՝ «ՀՀՀ-ի նոր մշակած առաքելութիւնն ու տեսլականը», «Մասնագիտական հարցազրոյց»-ի բաժինը, «Ազգագրական, բանասիրական» հոմ նիւթի ներկայացումը, հատորները եզրափակող «Յիշատակարան»-ը, միաժամանակ նշելով, որ հանդէսը՝ «Բեմ կը հանդիսանայ Նաեւ երիտասարդ գիտնականներու՝ այն հաստատ համոզումով, կամ գէթ՝ ակնկալիքով, որ անոնք այս հանգամանաւոր հանդէսին մէջ հրատարակուելով՝ կը դառնան աւելի՛ խստապահանջ, աւելի՛ բժախնդիր եւ յօրուած առ յօրուած կը բարելաւեն իրենց աշխատանքը»:

Վաստակաշատ բանասէր դոկտ. Յակոբ Զոլաբեանի խօսքը կարողաց հանդէսի խմբագիր Սիլվա Փափագեան: Դոկտ. Զոլաբեան ՀՀՀ-ն նկատեց՝ «Ներկայիս Սփիւռքի մէջ ասանդակաւ ուղղագրութեամբ լոյս տեսնող փաստօրէն միակը... բոլոր գրութիւնները, արեւմտահայերէն թէ արեւելահայերէն, լոյս կը տեսնեն ասանդակաւ ուղղագրութեամբ: Մեր ուղղագրութեան բազմաձեւութիւններու բովին մէջ խըմբագրութիւնը միօրինականացման յստակ մօտեցում կը ցուցաբերէ: Ասիկա յոյժ կարեւոր փաստ մըն է հայ գիտութեան արեւմտահայ ասանդութիւնները պահպանելու տեսակէտէն»: Ապա ան ընդգծեց, որ՝ «Հայագիտութեան նուաճումները պէտք է հասնին օտար ընթերցողին, ասիկա անհրաժեշտութիւն մըն է... մեր ցանկութիւնն է, որ մեր ուսումնասիրողները նախ կ'իրարկեն կրեմատահայերէնը եւ, հոսկ, հանրայնացնելու համար արժանի նիւթերը շարադրեն անգլերէնով կամ այլ լեզուով մը: Հայագիտութիւնը մեր հոգեւոր եւ նիւթական մշակոյթի արժեքները արժեւորելու ու հանրայնացնելու դերը ունեցած է եւ ունի ներկայիս, - ու թելադրեց, - պէտք է կարողանալ օտար եւ օտարագիր հայագետներուն ալ ցանկալի բեմ դարձնել հանդէսը: Կ'աւելնալուի Նաեւ, որ հանդէսը կարողանայ սերտ կապեր հաստատել ամբողջ սփիւռքի տարածքին սփռուած հայագիտական հիմնարկներու եւ ամպիոններու հետ ու ապահովել անոնց մերձեցումն ու նոյնիսկ համատեղ ծրագիրներ մշակել»: Դոկտ. Զոլաբեան անդրադարձաւ Նաեւ ընդգրկուած նիւթերու խմբաւորումներուն՝ պատմա-հնագիտութիւն, գրականագիտութիւն, լեզուաբանութիւն, տնտեսագիտութիւն, արուեստ ու արհեստ, ընկերաբանութիւն, բանարուեստ եւ ազգագրութիւն, եկեղե-



ցագիտութիւն, փիլիսոփայութիւն, հրապարակումներ եւ այլն, մատնանշեց «մօտիկ անցեալի մեր խընդիրները լուսարձակի տակ» առնող նիւթեր, ու շեշտեց. «Մեզի համար յոյժ կարեւոր են արեւմտահայութեան ու մանաւանդ սփիւռքահայութեան վերաբերող ուսումնասիրութիւնները, որոնք լուսարձակի տակ կ'առնեն որոշ տեղավայրեր, դէպքեր ու դէմքեր, կամ կու տան համայնքային-յարանուանական ու զաղուրդային պատմութեան պատկերը», «ցանկալի» նկատեց, որ «սփիւռքահայ գրականագետներ, արեւստաբաններ եւ երաժշտագետներ տեղ գրաւեն հանդէսին մէջ»: Ան նկատեց որոշ հետաքրքրութեան մը ներկայութիւնը՝ «Սփիւռքի մէջ հայ ժողովուրդի նիւթական մշակոյթի ցրուած արժեքները հաւաքողներուն եւ հանրայնացնող ուսումնասիրողներու նկատմամբ», կարեւորեց հանդէսի հրապարակումներու բաժինը, հանդէսին «իւրայատկութիւններէն» համարեց աշխատակիցներու կենսագրութեան ու «մահագրականներ» բաժինները: Հոսկ, ան գնահատելով հանդէսի լեզուագիտութեան բաժինը՝ «ցանկալի» գտաւ, որ՝ «Սփիւռքի համար լրջագոյն խնդիր ներկայացնող արեւմտահայերէնի ուսուցման հետ կապուած հարցերը՝ մեթոտաբանութիւն, դասագիրքեր, ուսուցիչներու որակաւորում, առկայ եւ առցանց, ամենօրեայ եւ միօրեայ ուսուցման հարցերը... ընկարկութիւն ենթարկուին» հանդէսին մէջ: Դոկտ. Զոլաբեան շնորհակալութիւն յայտնեց հանդէսի հրատարակութեան զօրավիգ կանգնած մարմիններուն եւ խմբագրակազմին «բժախնդիր ու հետեւողական աշխատանքներուն»:

Շնորհահանդէսի գեղարուեստական բաժինով 42-րդ հատորի առաջին գիրքին մէջ լոյս տեսած հանգուցեալ Վահան Ա. քնյ. Զենտիորճեանի ինքնագիր յօդոնումներէն երգեց անոր թողը՝ Սեակ Զենտիորճեան:

Անդրադառնալով դարերու ընթացքին բառերու, հասկացողութիւններու եւ հաստատութիւններու հանդէպ մարդ արարածին ընկալման փոփոխութիւններուն՝ հանդէսի պատասխանատու խմբագիր դոկտ. Անդրանիկ Տազեան հաւաստեց, որ՝ «ՀՀՀ-ի պատկան մարմինները, խմբագրակազմն ու անոր շուրջ հաւաքուածները... կը դաւանինք հայագիտութիւն հասկացողութեան նոր սահմանումին, զայն


Շար.ը՝ էջ 6

ԿՈԹՆԱԾ ԲԵՄԱՐՈՒԵՍՏԻՆ ԱՌՁԵԻ, ԻՆՉՊԷՄ՝ ՍՈՒՐԲ ԽՈՐԱՆԻՆ

Յոյժ նշանակալից տարի է համասփիւռքեան թատերարուեստի համար 2023 թուականը. նշանակալից եւ անշուշտ՝ յատկացուցիչ, վասնզի կը լրանայ ազգային մեծանուն երախտաւոր, գործարար, բեմադրիչ, բեմագիր, դերասան Գասպար Իփեկեանի (Կ. Պոլիս, 19 յունւար 1883 Պէրյուօ, 30 դեկտեմբեր, 1952) ծննդեան 140-ամեակը: Վստահ ենք, որ տարին յոբելեանական ըլլալէ զատ՝ համասփիւռքեան թատերարուեստի ազգայահ գործունեութեան՝ ցայժմ իր ծիրին մէջ վերընթաց շարժումի կը վերածուի:

Տակաւին շուրջ 100 տարի առաջ Լոզանի համալսարանի, Փարիզի Փոլ Մոնէի երաժշտանոցի դասընթացներու ունկնդիր, Սորպոնի համալսարանի իրաւագիտութեան բաժանմունքի շրջանաւարտ Գասպար Իփեկեանը, որ 20-րդ դարակզգին եղբօր՝ բեմադրիչ, դերասան Արմէն Արմէնեանի հետ Թիֆլիսի մէջ ծաւալած էր թատերական գործունեութիւն, Հայաստան պոլշեիկեան բռնատիրութիւն հաստատուելէն ետք ստանձնած ըլլալով Համագայինի վարչութեան քարտուղար-գործիչի պաշտօնը, լիապէս լծուած էր ընկերութեան իրատարակչական աշխատանքներու անխաթար կազմակերպմանը: Այդ տարիներու անոր կատարած աշխատանքներու մասին ճշմարտօրէն կը վկայէ Նիկոլ Աղբալեանը. «Հայ բեմը շատ է տեսած մեծատաղանդ դերասաններ, բայց քիչ է տեսած հաւաքական եւ ներդաշնակ խաղարկութիւն: Շեշտել անհատը եւ անտեսել խումբը՝ այս է եղած խաղարկութեան սովորական ընթացքը: Փառասիրութիւններ մորթած են թատերակը բեմի վրայ եւ ցայտունին զոհած են ներդաշնակը: Տարբեր է Գասպար Իփեկեանի տեսակետը: Նա հետամուտ է արուեստի գործ ստեղծելուն...»:

Այս ամէնով հանդերձ, չմասնալատելով Գասպար Իփեկեանի Թեհրանում (1916-1921 թթ. եղած է Թեհրանի առաջին հայ քաղաքապետը) եւ այլ երկրներում ազգային, մշակութա-



յին գործունեութիւնը, առանձնապէս չենք կրնար զանց առնել Գասպար Իփեկեան-Լեւոն Ծանթ չափազանց ներդաշն բեմարուեստային համագործակցութիւնը, գոր Պէրյուօում Համագայինի թատերախումբի ստեղծումով նշանաւորուեցաւ: Սփիւռքեան նոր սերունդին մէջ ազգային թատրոնի եւ թատերգութեան նկատմամբ արթնցած անկորնչելի սիրոյ ապացոյց մըն է ներկայիս Համագայինի թատերախումբը:

Ստորեւ հրատարակուող նամակը՝ հասցեագրուած «Չուարթըն» հանդէսի խմբագիր Հրանդ Բալույեանին (Կ. Պոլիս, 1904-Փարիզ, 1968), Աւետիս Ահարոնեանի ստեղծագործութիւնը բոլորովին այլ երեսակներու վրայ բացայայտելէն զատ՝ Նաեւ այնպիսի խընդիրներու կը վերաբերի, որոնք այսօր ալ հետաքրքրաշարք են, մանաւանդ առկայ է երկուսան եւ այսօրուան սերունդներու «հոգեկան, զգայական կապի ինքնականացումը», գոր հայրուան ինքնութեան պահպանման երաշխիքը եղած է՝ իբրեւ հզօրագոյն ազդակ...

ԴՈԿՏ. ԱՐԹՈՐ ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

10 յունւար, 2023
Յատուկ «Ազդակ»-ին համար

Նամակ խմբագրութեան

... Բալույեան
Ստացայ ձեր երկտողը, որով կ'ուզեք, որ մասնակցութիւնս բերեմ Ահարոնեանի նուիրում «Չուարթըն»-ին: Այ՛ սիրելիս, մեր սերունդը ինչ որ կարելի է ըսել, ըսել է Ահարոնեանի մասին: Իսկ մենք իմա պիտի ուզեինք լսել նոր սերունդներու կամ մեզ անմիջապէս յաջորդողներու խօսքը իր մասին: Այդ առիթ մը պիտի ըլլար, մանաւանդ, ճշդելու Ահարոնեանի գործին ազդեցութիւնը ժամանակի տեսակէտէն: Մեր պայմաններուն մէջ 30-40 տարիներ հաւասար են՝ իբրեւ տնտեսագիտութեան չափանիշ՝ առ նուազն մէկ ու կէս դարի: Գրականութիւնն ալ, վերին երեսնամեակին, խեցապարտութեան (օթթարկիզմ) դատապարտուած, թե՛ մեր «Հայրենիք»-ի պատնէշներուն ետեւ եւ թե՛ դուրսը՝ գաղութահայութեան մէջ, ուր կարծես կը սկսի տարածուիլ այդ իրեղէն անթափանցելի բոցերուն ուժն ու ազդեցութիւնը:

Ո՛ր աստիճան պիտի կրնայ հակազդէ մտքի եւ խօսքի ազատութեան մէջ հասակ նետած գաղութահայ սերունդը այդ խանձումին եւ փոշիացումին, ահա այդ է, որ սիրով պիտի ուզեց ճշդել եւ Ահարոնեանի գործին գնահատումը այդ սերունդէն, կրկնակի հետաքրքրութիւն կը ներկայացնէ հիւներուս համար՝ այդ տեսակէտէն դիտուած:

Ահարոնեանի ստեղծագործութիւնը կրնայ բաժանուիլ երկու շրջաններու. Ա) Հայութեան կրած աղետներու՝ ողբի, լացի, ըմբօստացման եւ տառապանքի շրջան, եւ Բ) Հայրենասերի կարօտակեզ վերյիշումներու, վերապրումներու շրջան:

Բ. Շրջանի Ահարոնեանը կը պարզէ, կը բացատրէ, կը լրացնէ Ա. շրջանի Ահարոնեանը: Աւելի կը յստականայ մեր մտքին ու սրտին, հայկական կոտորածներու, հայ սպանդի Ողբերգական զգայունութիւնը, իր տառապանքի խորութիւնը, իր շեշտի անկեղծութիւնը, իր հաղորդականութեան ամբողջ զաղուրդը: Որովհետեւ Բ. շրջանի հայրենի գանձը կը թրթռացնէ այնպիսի լարեղ սիրոյ ու յափշտակութեան այնպիսի թռիչք մը եւ կարօտի այնքան խոր ու զուպ թախիծ մը (գոր մէջ ընդ մէջ ընդհատող սրամիտ ծախտներ ոչ միայն չեն մեղմող, այլ աւելի կը շեշտեն կարծես այդ թախիծը), որոնք կը կոթողեն հայրենասերը:

Հարազատ էր մեր սերունդի հոգի-

ներուն եւ ապրումներուն Ահարոնեանը իր սգերգով, տեսակ մը արձագանքի էր ամբողջ հայութեան տառապանքին:

Որքա՛ն հարազատ է ան գաղութահայ սերունդին՝ իբրեւ կարօտակեզ հայրենեղբակ: Ահա այդ է, որ կրկնակի պիտի հետաքրքրէր մեզ՝ իհնէրս: Պիտի ուզեինք, որ նոր սերունդը տարուէր երկրորդ շրջանի Ահարոնեանով եւ զգար իր էութեան նոյնքան հարազատ: Դառնար անոր կարօտի երգը նոյնքան իրը (այս եւ մնացեալ ընդգծումները բնագրային են, Ա. Ա.), որքան մերն է երբեմնի վիշտի եւ սուգի ցնցող ողբը:

Այն ատեն Ահարոնեանի ստեղծագործութիւնը պիտի ստանար այլապէս շքեղ ու ճաճակնոջ նշանակութիւն հայ գրականութեան համար: Ան ոչ միայն ծառայած պիտի ըլլար փաստելու հոգեկան-զգայական կապի տեսականացումը հայութեան, այլ պիտի դառնար հզօրագոյն ազդակ՝ այդ կապի ամրապնդումին ու տեսականացումին:

Ահարոնեանի ստեղծագործութիւնը, որ գերազանցօրէն հոգիի եւ սիրտի ստեղծագործութիւն մըն է, պիտի ստանայ այն ատեն այն դիրքը հայ գրականութեան մէջ, որուն արժանի է. հարազատ ծնունդ եւ արտայայտութիւն. հայ կեանքի. հայ երգի. հայ սիրտի:

Այն ատեն ապագայ բանասերը պիտի կրնայ հպարտօրէն բարձրացնել իր գլուխը աշխատանքի սեղանէ՛ն՝ զոչելու համար.

«Մեր հայրենեան լաւարկագիր Գողթան ընտանեւը չէն լսող երբեք, եւ ինչքան եւ պիտի ինչքան իրենց հոգեզմայլ երգերը ժամանակի եւ տարածութեան ընդմէջէն»:

Երկարեցաւ նամակս եւ շեղեցաւ իր նպատակէն, որ միմիայն քաղաքավարական բացատրութիւն մը ըլլալու սահմաններ էի: Կը ներեք: Գուցէ պատճառ մերժումիս սխալ մեկնուելու վային էր:

Ձեր պահանջածը աշխատանք մըն էր, որուն համար պէտք եղած կեդրոնացման եւ ինքնամոփոփման ո՛չ փոքըն ունիմ, ո՛չ հիւրը ներկայ օրերու: Պէտք է հասկնաք եւ ներողամիտ ըլլաք:

ԳԱՍՊԱՐ ԻՓԵԿԵԱՆ

Պիւսեւել. 20 հոկտ., 1946
«Չուարթըն», Փարիզ, 1947 յունւար

ՆՈՐՕՐԵԱՅ ԱՌԱՍՊԵՂ, ԹԷ՞ ՄԱՐԴԻԿ ԽԱԲԵԼՈՒ ԱՐՈՒԵՍԸ

Ցատկապես Միացեալ Նահանգներու մէջ շատ տարածուած երեւոյթ եղած է առեղծուածային պատմութիւններու հրապարակումը, տարածումը թերթերու, պատկերասփիւռի, շարժապատկերներու եւ այժմ համացանցի միջոցով: Կարգ մը խմբակներ օգտագործելով շատերու սնահաւատութիւնը եւ միամտութիւնը՝ կը հիւսեն առասպել-

ներ, որոնք որպէս իրականութիւն «կը վաճառեն»: Անշուշտ նոյնպէս կան մուք ուժեր, որոնք չես գիտեր՝ ի՞նչ շահեր կը հետապնդեն: Ամերիկեան քանի մը կայքերէ քաղելով՝ կը ներկայացնենք Մոնթանայի Լանկվիյ աւանի անհետացման առասպելը:

Ն.



Լանկվիյ գոյութիւն ունեցա՞ծ է, թե՞ ոչ

Լանկվիյի առասպելը պատուած է առեղծուածով եւ հակատութիւններով: Ինչպէս կ'ընտէր, այս առեղծուածային ուրուական աւանը անհետացաւ առանց հետքի: Ուրուական քաղաքները, ըստ կանոնի, կ'անհետանան հետք մը ձգելով, բայց կը թուէր, թէ Լանկվիյը իր ետին ոչ մէկ ֆիզիքական ապացոյց ձգած է:

Միւս ուրուական քաղաքները Մոնթանայի մէջ եւ անոր սահմաններէն դուրս իրենց գոյութեան ապացոյցներ կը ձգեն: Դուք կրնաք տեսնել հին գոմերը, տունները եւ նոյնիսկ հիմնական փողոցային առետուորի մնացորդները: Բայց Լանկվիյի պարագան այդպէս չէ:

Այս աւանը գոյութիւն ունի փսիսութներու, ըստւերներու եւ տարածայնութիւններու մէջ: Որոշ մարդիկ կ'երդնուն, որ դուք դեռ կրնաք գտնել Լանկվիյի ուրուականներու նման մնացորդներ: Բայց եւ այնպէս, ուրիշներ կը վկայեն, որ ամբողջ առասպելը ինամբով պատրաստուած կեդծիք է:

Եկե՛ք՝ փորփրենք տեսնելու համար, թէ արդեօք կրնա՞նք հասնիլ Լանկվիյ առասպելի յատակին:

Ո՞րն է Մոնթանայի անհետ կորսուած աւանը



Առասպելը կ'ըսէ, որ Մոնթանա Նահանգի Լանկվիյ աւանի բոլոր ֆիզիքական եւ առցանց ապացոյցները հեռացուած են 2000 թուականի սկիզբին: Այսօր դուք այդ աւանին մասին առցանց ոչ մէկ լուսանկար կամ յիշատակում կը գտնեք: Առասպելը նոյնպէս կը պնդէ, որ առեղծուածային ուժ մը 1900-ականներու սկիզբին Լանկվիյի բնակիչները անհետացուց:

Հաւատացողները ձեզի կ'ըսեն, որ Լանկվիյ անհետացած է, քանի որ անոր բնակիչները անհետացած են անօրէն հանգամանքներու մէջ: Անէլի՛ն. անոնք կը կարծեն, որ պետութիւնը կ'ուզէ այն մեզմէ գաղտնի պահել:

Ոմանք կ'ըսեն, որ քաղաքի գոյութեան բոլոր ապացոյցները մաքրուած են բնակավայրէն եւ համացանցէն: Այս ուժերը չէին ուզեր, որ ռեւէ մէկը չափազանց շատ հարցումներ ուղղէ:

Կասկածողները ձեզի կ'ըսեն, որ Մոնթանայի անհետացած աւանը խաբէութիւն է, որ առաջին անգամ յիշատակուած է 2016-ին վերապատրաստուած Ghostbusters շարժապատկերին մէջ: Բազմաթիւ կասկածողներ կը պնդեն, որ Ghostbusters-ը պատրաստողները ստեղծած են Լանկվիյի առասպելը՝ իրենց գալիք շարժապատկերին համար աղմուկ բարձրացնելու նպատակով:

Արդե՞ք Լանկվիյ իսկական վայր է

Այդ կախուած է այն բանէն, թէ որո՞ւ կը հարցնեք: Լանկվիյի առցանց որոնումը ոչ մէկ լուսանկար,

քարտէսի վրայ աւանին գտնուելու վայրը կամ այլ տեղեկութիւններ կու տայ, որոնք կրնան ձեզ այնտեղ տանիլ: Դուք նոյնպէս չէք գտներ այնտեղ ապրած մարդոց պատմութիւններ կամ տեղեկութիւններ, թէ ինչպէ՛ս ամեն բան անհետացած է:

Բազմաթիւ մոնթանացիներ կ'երդնուն այն փաստով, որ Լանկվիյը իսկապէս գոյութիւն ունեցած է: Անոնք նոյնպէս կը պնդեն, որ առասպելը Ghostbusters շարժանկարէն առաջ գոյութիւն ունեցած է:

Ինչո՞ւ Լանկվիյ հռչակաւոր է

Լանկվիյ յայտնի է բնակիչներու ենթադրաբար անհետացման սարսափելի ձեւով: Հաւատացողները միշտ կ'ըսեն, որ առեղծուածային ուժ մը քաղաքի բնակիչները անհետացուցած է:

Մենք չենք գիտեր, թէ այդ մէկը իրականութեան մէջ ի՞նչ կը նշանակէ: Իբր թէ բոլոր ապացոյցները ջնջուած են այնտեղ տեղի ունեցածը գաղտնի պահելու համար:

Լանկվիյ նոյնպէս յայտնի է իր գոյութեան շուրջը վեճերու պատճառով: Շատեր կ'ըսեն, որ գեղարուեստական հեքիաթը պարզապէս քաղաքային առասպել է, միւսը միւսները ջերմեռանդ հաւատացողներ են: Այդ բանավեճը, թէ արդեօք այն եղա՞ծ է, եւ ի՞նչ պատահած է բնակիչներուն, կը նպաստէ անոր հռչակին:

Ի՞նչ է Լանկվիյի առասպելը

Առասպելը կ'ըսէ, որ 1900-ականներու սկիզբին առեղծուածային ուժ մը Լանկվիյը եւ բնակիչները անհետացուց: Բնակիչները կամ մահացած են, կամ կարճ ժամանակ ետք անհետացած:

Ապա կազմակերպութիւն մը չուզէր, որ ռեւէ մէկը գիտնար, թէ ի՞նչ տեղի ունեցած է: Անոնք եկան եւ մաքրեցին քաղաքի գոյութեան բոլոր ապացոյցները: Քողարկումը այնքան հեռուն գնաց, որ համացանցը մաքրեց ռոբէտ յիշատակում, ապացոյց:

Բայց եւ այնպէս, առասպելները զուարճալի են:

Դուք դեռ կրնաք գտնել Լանկվիյի որոշ պատմութիւններ այնտեղ եւ կրնաք ընտրել՝ հաւատա՞լ, թե՞ ոչ:

Ո՞ր կրնաք գտնել Լանկվիյը

Հաւատացողները կը վկայեն, որ Մոնթանայի Լանկվիյը կը գտնուէր արեւելեան դաշտավայրերուն մէջ: Բայց չկան շատ ապացոյցներ, որոնք կ'օգնեն ձեզի գտնելու խորհրդաւոր աւանը:

Կուլըլի քարտէսները ցոյց չեն տար Լանկվիյը: Բացի ատկէ՛ դուք միայն կը գտնեք ուրուագծային համացանցային հաշիւներ այն մասին, թէ ո՞ր կրնար ըլլալ:

Լանկվիյի առասպելը նոյնպէս կը նշէ, որ ամբողջ քաղաքն ու անոր բնակիչները անհետացած են: Այսպիսով, դուք դժուար կը հասկնաք Լանկվիյի գտնուելու վայրը, նոյնիսկ եթէ կանգնած ըլլաք ճիշդ այնտեղ:

Մոնթանան ունի՞ ուրուական այլ քաղաքներ

Ինչպէս Միացեալ Նահանգներու զանազան շրջաններ, Մոնթանան եւս ունի բազմաթիւ ուրուական քաղաքներ, որոնք դուք կրնաք իրականութեան մէջ այցելել եւ ուսումնասիրել:

Մոնթանայի Զաւլ Թաունը, որ հիմնադրուած է 1891 թուականին, ուներ դպրոց, բանտ, խանութներ, 14 սրահ եւ 7 հասարակաց տուն: 1893 թուականին Արծաթ խուճապը ոչնչացուց գայլն, եւ կարճ ժամանակ ետք անիկա դարձաւ ուրուական քաղաք: Դուք կրնաք տեսնել Զաւլ Թաունի մնացորդները եւ գիտնալ անոր մասին ամեն բան, Մոնթանայի Ուայթ Սալֆր Սփրինկս քաղաքի թանգարանին մէջ:

Պաննաք հիմնադրուած է 1862 թուականին, եղած է Մոնթանայի առաջին մայրաքաղաքը: Հակառակ իր սկզբնական յաջողութեան՝ Պաննաք ի վերջոյ դարձաւ Մոնթանայի ուրուական քաղաք 1900-ականներու սկիզբին:

Պաննաք այժմ պետական հանրային պարտէզ է: Դուք կրնաք այցելել 60 կառոյցներ, որոնք տակաւին կանգնած են որպէս վկայութիւն, որ այս ուրուական քաղաքը գոյութիւն ունեցած է:

Շատերը 1800-ականներու կետերէն հաւաքուեցան Մոնթանա՝ ոսկիի, արծաթի եւ այլ արծէքաւոր հանքերու համար: Այսպիսով, բազմաթիւ քաղաքներ շատ արագ վերելք ու անկում ապրեցան, եւ այս պատճառով Մոնթանայի մէջ ստեղծուեցաւ հարուստ ուրուական քաղաքի տարածք:

Կ'արժէ՞ այցելել Լանկվիյ

Եթէ կը հաւատաք Լանկվիյի առասպելին, թերեւս ուզեք շրջապալի արեւելեան Մոնթանայի մէջ՝ գտնելու անոր գոյութեան եւ քաղաքացիներու վաղաժամ մահուան ապացոյցները:

Իսկ եթէ կը կարծեք, որ անիկա երբեք գոյութիւն չէ ունեցած, վստահաբար պիտի չգտնեք գայլն, թեւէ կ'արժէ փնտռել: Անկախ անկէ, թէ դուք հաւատացողներո՞ւ, թե՞ խաբէքաներու խումբին մէջն էք, ուրուական քաղաքները զուարճալի պատմական երեւոյթներ են, որոնք բոլորը կը մղեն գուշակութիւններ ընելու:

ՄՈՆԹԱՆԱՅԻ ԼԱՆԿՎԻՅ ԱՎԱՆԻ ՇԱՏԵՐՈՒՆ ԱՆԾԱՆՕԹ ԱՌԱՍՊԵԼԸ



Շատեր չեն գիտեր Լանկվիյի մասին, որ առասպելական աւան մըն է Մոնթանա Նահանգի մէջ, ուր կան քանի մը ուրուական աւաններ, իւրաքանչիւրը իր իւրայատկութեամբ փորագրուած՝ Միացեալ Նահանգներու պատմութեան մէջ:

Դուք գիտե՞ք, որ Գանձ Նահանգը ունի տարօրինակ առասպել մը, որ անհետացած է գիշերուան մը մէջ:

Եթէ Նախապէս բնաւ չէք լսած Մոնթանայի Լանկվիյ աւանին մասին, ահաւասիկ ձեզի կը ներկայացնենք ժողովրդական բանահիւսութիւնը:

Եթէ դիտած էք Ghostbusters շարժապատկերի 2016 թուականի տարբերակը, կրնաք յիշել Լանկվիյի մասին նշումը. «Ամբողջ Լանկվիյ աւանը կ'անհետանայ»:

Բայց անոնց համար, որոնք գիտեն, այդ բաւական աղմկայարոյց է:

Լանկվիյի պատմութիւնը դարձած է Մոնթանայի քաղաքային առասպել, որ յատկապէս յայտնի է համացանցին մէջ:

Ոմանք կ'ըսեն, որ ամբողջ աւանին անհետացման ապացոյցներու առցանց որոնումը սկսած է Ghostbusters շարժապատկերի հրապարակումէն ետք: Ուրիշներ երդում կ'ընեն, որ այս մասին տարածայնութիւններ շատ աւելի առաջ եղած են:

Անշուշտ Կուլըլի ոչ մէկ որոնումի միջոցով Լանկվիյի նկար կը գտնեք:

«ԽՆԱՄՔՈՎ ՄՇԱԿՈՒԱԾ ԽԱԲԵՌՈՒԹԻՒՆ»



Պատմութիւնը հարուստ է զանազան առեղծուածային դէպքերով, ներառեալ՝ տարօրինակ ու անբացատրելի անհետացումով:

Կարծես, թէ զանազան անհատներ ոչ միայն կը հեռանան երկրի երեսէն, այլեւ կը թուի, թէ ամբողջ քաղաքներ պարզապէս կ'անհետանան օդին մէջ, ոչ մէկ հետք կը ձգեն, եւ իրենց մասին չի խօսուիր:

Մոնթանա Նահանգի քիչ յայտնի հեքիաթներէն մէկը կապուած է Լանկվիյ աւանի տարօրինակ «քաղաքային առասպելին»: Իբր թէ աւանը «անհետացած է գիշերուան մը մէջ»: Յը՛մ...

Քաղաքը նոյնիսկ յայտնուած է Կուլըլի քարտէսին վրայ, բայց ոչ ոք անծամբ կարողացած է գտնել այն: Կուլըլի քարտէսը, ըստ երեւոյթին, պահպանած է նկարներ փողոցներու տեսարաններէ, բայց՝ ոչ աւանի քարտէսը:

Հարցերը աւելի շփոթութեան մատնելու համար աւանը գտնելու նպատակով Կուլըլի մէջ կատարուած է աւելի քան 7 միլիոն որոնում: Ոչ ոք գիտցած է կամ՝ բացատրած, թէ ինչո՞ւ ա-

Պատմութեան գիրքերուն մէջ անոր մասին ոչ մէկ ապացոյց կայ:

Բայց առասպելը կ'ըսէ, որ Լանկվիյը իսկական աւան մըն էր, փոքր գիւղական վայր, որ խորհրդաւոր կերպով անհետացաւ 2000-ականներու սկիզբին: Այդ ընթացքին նոյնպէս անհետացան անոր վերաբերեալ բոլոր առցանց քննարկումները եւ այդ աւանի՝ գոյութեան բոլոր ապացոյցները:

Ակնրեւ եւ պարզ է, որ Լանկվիյ իրականութեան մէջ երբեք գոյութիւն չէ ունեցած... թե՞ այն եղած է:

Mandela Effect-ի շնորհիւ դուք կը գտնեք մոնթանացիներ, որոնք կ'երդնուն, որ Լանկվիյ Նախապէս գոյութիւն ունեցած է:

Mandela Effect-ը իրավիճակ մըն է, երբ մարդոց մեծ զանգուած մը կը կարծէ, թէ իրադարձութիւն մը տեղի ունեցած է, երբ իրականութեան մէջ այդ տեղի չէ ունեցած: Ghostbusters-ի հրապարակումէն ետք քանի մը մոնթանացիներ նշած են աւանին մասին ակնարկը՝ շեշտելով, որ այն իրական վայր է, թէւ այդ կրնար հեցանկան ըլլալ:

Լաա՞ծ էք Լանկվիյի պատմութիւնը

Եթէ այդ ոչինչ կ'ըսէ, գոնէ հիանալի նիւթ է հաւաքողներու ժամանակ խօսելու համար: Դուք նոյնիսկ կրնաք գտնել մէկը, որ կը պնդէ, թէ կը յիշէ այդ:

ՍԼԱԶ

«ՔՈ՛ՒՆ ԵՂԻՐ, ԲԱԼԱՎՍ...»



Հայաստանի հետ ամբողջ հայու-թիւնը անգամ մը եւս խոր ցնցում եւ յուզում ապրեցաւ՝ իմանալով, որ 19 յունուարի կանուխ ժամերուն, Գեղարքունիքի մարզի սահմանամերձ Ազատ գիւղի զինուորական մէկ կա-ցարանին մէջ աղետալի հրդեհ մը պատահած է եւ խլած՝ 15 մատղաշ զինուորներու կեանքը:

Ահաւոր ողբերգութիւնը ստեղծեց տարբեր արձառնեցներ, դուռ բա-ցաւ հազար ու մէկ քննադատութիւն-ներու, քննարկումներու, մէկնաբա-նույթեան: Այդ բոլորէն անդին՝ դա-ժան իրականութիւնը այն է, որ 15 զի-նուորներ անիմաստ կերպով զոհ գացած են բնակեցման անընդունելի պայմաններու:

Շատ բան ըսուեցաւ ողբերգու-թեան պատճառներուն մասին, պաշ-տօնական աղբիւրներ եւ իշխանու-թեան ներկայացուցիչներ հրապա-րակ եկան հակասական եւ քիչ համո-զիչ բացատրութիւններով: Զենք ու-զէր մտնել այդ լաբիրինթոսին մէջ, այլ կը սպասեցը, որ պաշտօնական քննութիւնները արդիւնքի հասնին եւ մանրամասնութիւններ յստականան, իսկական յանցաւորները գտնեն ար-ժանի պատիժը (եթէ անշուշտ այս քննութիւններն ալ պիտի չմատնուին բազմաթիւ նախընթացներու ճակա-տագիրին եւ պիտի չդրուին բարձի տակ):

Դեպքէն ետք արդէն անցած են չ-ո-ր-ս օ-ո-ր-եր, իսկ Երեւանի իշխա-նութիւնները ո՛չ հրապարակած են զոհերուն անունները (ընդդիմադիր-ներ պարտականութիւնը ըրին), ո՛չ ալ զոհերուն համար սուգի նշան ցոյց կու տան: Անեխ՛ն. լուրեր կը տարա-ծուին, թէ նոր ներքին գործոց նախա-րարի նշանակումը առիթ եղած է, որ իշխանաւորները դեպքին յաջորդ ժա-մերուն խնդրեց սարքեն (կամ առնը-լազն զուարճանալ), կարծեք թէ ող-բերգութիւնը պատահած է հեռաւոր եւ հայութեան հետ հաղորդ չեղող երկրի մը մէջ (հա՛, չմոռանք, որ նոյն իշխանաւորները վայրկեան չեն կորսնցներ ցաւակցելու, երբ Թուր-քիոյ մէջ աղետներ կը պատահին):

Եւ իրաւունք չունի՛ր ընդդիմադիր-ները, երբ անգամ մը եւս քննադա-տութիւններու թղանթները լարած են երկրի ողբերգութեան անհա-ղորդ իշխանաւորներուն դէմ (չբա-նանք Արցախի հանդէպ կրաւորա-կան եւ հազիւ թէ ձեւական շարժում ցուցաբերելու անոնց կեցուածքնե-րուն էջը): Չէ՛ որ բազմաթիւ նախըն-թացներ կան, չէ՛ որ պատերազմա-կան գերիները կը մնան անտէր (անոնց թիւն իսկ անորոշ է աւելի քան երկու տարի ետք), չէ՛ որ վերջին ճակատումներուն թշնամիին դէմ արիաբար կուրծք տուած եւ նահա-տակուած զինուորներուն դիակները կը մնան Գերիներու սարքած սա-կարկութեանց առարկայ, չէ՛ որ... չէ՛ որ...



Լոս Անճելէսի մօ-տակա Մոնթերէյ Փարք աւանին մէջ 21-22 յունուարի լուսոցող գիշերուան կիսուն ահաւոր ոճիր մը տեղի ունեցաւ: Մարդ մը կրակ բացաւ տօնա-կատարութեան մը մասնակիցներու վրայ, խլեց 10 զոհ, պատճա-ռեց 10 վիրաւոր: Միա-ցեալ Նահանգներու հետ աշխարհներ ալ ցնցուեցան արիւնալի դեպքին պատ-ճառով: Լրատու աղբիւրները անէլ ի վեր իրենց հաղորդումներուն մէջ լայն տեղ կու տան դեպքին մասին նորութիւններուն: Առանձնացնենք զոնէ մէկ նորութիւն. հանրապետու-

թեան նախագահը՝ ճօ Պայտըն, դեպ-քէն հազիւ 24 ժամ ետք ազգային սուգ յայտարարեց երկրի տարած-քին. պետական հաստատութեանց վերեւ դրօշակները մինչեւ հինգշաբ-թի պիտի պարզուին կիսովին: (Հոս քննարկման նիւթ չեն այս կամ այլ նախագահներու ձախաւերութիւննե-րը):

Մարդկային բան չէ զոհերուն մի-ջեւ բաղդատութիւն դնելը. Հայաս-տանի մէջ՝ ենթադրեալ արկածի զո-հեր, Լոս Անճելէսի մօտ՝ ոճիրի զո-հեր: Մարդկային կեանքերու կորուս-տը հաւասարապէս ցաւալի է, ո՛ր որ ալ ըլլայ (չմոռանք Ուքրանիան եւ Միջերկրականի մէջ ծովամոյն եղող-ները, ու... ողբերգութեանց շարքը երկար է): Ամարդկայինն ու անտը-րամաբանականը Երեւանի իշխա-նաւորներուն կրաւորական անտար-բերութիւնն է: (Հաղորդուեցաւ, որ վարչապետը խուսափեր է զոհի մը յուղարկաւորութեան ներկայ ըլլալէ, որովհետեւ... վախցեր է, որ գինք ծե-ծեն):

Ու երբ բարձրաստիճան պաշտօ-նատարի մը հարց կը տրուի, թէ ին-չո՛ւ պաշտօնական սուգ չի յայտա-րարուիր (եւ սա անտարբերութեամբ դիմաւորուող առաջին դժբախտ դեպ-քը չէ), ան կը պատասխանէ, որ չեն ուզեր ժողովուրդը ողբերգութիւնը իյնեցնող մթնոլորտի մէջ պահել (ու-րեմն չգարմանանք, որ այս տարի կրնան նաեւ ապրիլ 24-ը ցիշատա-կել), կամ ալ այն, որ խորհրդարանը տակաւին այդ հարցը չէ քննարկած:

Իսկ այդ ինչպէ՛ս եղաւ, որ կառա-վարութիւնը դեպքէն միայն քանի մը ժամ ետք, ու միայն նախնական տե-ղեկութիւններու հիմամբ, դանդա-ղում չունեցաւ պաշտօնական ընելու զօրամասի մը հրամանատարական ամբողջ կազմը (չմտնենք մտահոգու-թիւն յայտնող մէկնաբանութիւննե-րուն ոլորապտոյտին մէջ), աւելին, այդ ինչպէ՛ս կ'ըլլայ, որ մեր ժողո-վուրդը կը շարունակէ հանդուրժել այս կործանարար անբաններուն պաշտօնավարութեան շարունակու-մը...

... Երկուցուկէ տարի առաջ մուրճ ճօճելով ընտրապայքար մղողը՝ «Ժո-ղովուրդին քուեով ընտրեալ»-ը, կը խոստանար՝ «Ապագայ կայ՛...»: Ապագան հասած է արդէն, ու բոլորս, ներառեալ՝ վարչապետի մենաշնոր-հեպներուն քուէ տուողներ, կը տես-նենք (անշուշտ տեսնել մերժողներ ալ կան), թէ ինչպիսի՛ր ապագայ մըն է անիկա, կամ «Խաղաղութիւն պիտի բերենք»-ը օր աւուր ինչպիսի՛ր կո-րուստներու կը տանի հայրենիքը:

Իշխանաւորներուն անտարբերու-թիւնը յայտնապէս վարակած է ժողո-վուրդը, որ կը նախընտրէ լսել «Քո՛ւն եղիր, բալա՛ւ»-ը, արհամարիէլ «Չարթի՛ր, լա՛օ»-ն:

Կարելի չէ՛ երկար մնալ անվերջա-նալի թուացող ոլորապտոյտի մէջ,

ա՛զգը պիտի վճռէ անհաղորդներուն եւ հայրենիքին ճակատագիրը:

Ս. ՍԱՅՏԵՐԵՃԵԱՆ

23 յունուար 2023

ՀԱՅ ԲԺԻՇԿՆԵՐՈՒ, ԱՏԱՄՆԱԲՈՒԺՆԵՐՈՒ ԵՒ ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒ ՈՂԻՍԱԿԱՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅԻՆ ԵՒ ԱՆԿԷ ԵՏՔ

2018-ին հրատարակե-ցինք «Հայ բժիշկներուն, ատամնաբուժներուն եւ դեղագործներուն ողիսա-կանը Հայոց ցեղասպա-նութեան ընթացքին» հա-տորդ:

Իբրեւ վերապրողներու զաւակ ու անոնց տառա-պանքներուն ժառանգոր-դը, նաեւ իբրեւ բժիշկ՝ պարտք զգացինք անդրա-դառնալ Հայոց ցեղասպա-նութեան ընթացքին հայ բժիշկներու, ատամնա-բուժներու եւ դեղագործ-ներու ողիսականին՝ արթ-նութեան հրաւիրելու հա-մար ներկայ դարուն ապ-րող բժշկական դասի բո-լոր անդամները, յուշելու, որ մեր ճիտին պարտքն է չմոռնալ մեր նահատակ գործընկերները, հե-տապնդել մեր արդար դա-տը, մնալ պահանջատէր եւ գործել ի Նպաստ արդարութեան ու խաղաղու-թեան:

Երկարաշունչ ուսումնասիրութիւն մը կատարե-ցինք այս հատորի պատրաստութեան համար: Ու-սումնասիրութիւնէն ի յայտ եկան հետեւեալ իրո-ղութիւնները.

Հայ բժիշկները, ատամնաբուժները եւ դեղա-գործները՝ իբրեւ հայ ժողովուրդի զաւակ-ներուն ընտրանիին մաս կազմող փա-ղանգ մը, անմասն չեն մնացած Հայոց ցե-ղասպանութենէն: Այն ցեղասպանութե-նէն, որ ծրագրուեցաւ, որոշուեցաւ եւ կազմակերպուեցաւ թուրք ազգայնամոլ քաղաքական եւ զինուորական ղեկավար-ներու կողմէ, իսկ գործադրութիւնը կա-տարուեցաւ թուրք շարդարար զինուորա-կաններու, քաղաքայիներու, բժիշկներու եւ վարձկան խմբակներու ձեռամբ:

Թուրքը չէ խնայած հայ բժիշկներու դարը: Թուրք բժիշկները եղած են առաջին մեղսակիցները՝ հայ բժիշկներու, ատամ-նաբուժներու եւ դեղագործներու սպանու-թեան: Հարիւրաւոր հայ բժիշկներ, ատամ-նաբուժներ եւ դեղագործներ նահատակ-ւած են, ուրիշներ հիւանդանոցներու մէջ ծառայութեան ըն-թացքին ժանտախտէ վարակուած ու մահացած են: Իսկ շատեր, ապրելէ ետք Ցեղասպանութեան գողգոթեան, Նախիւսանուիթեան կարգադրութե-ամբ վերապրած են ցրուած են աշխարհի չորս ծա-գերը ու շարունակած են իրենց բժշկական առա-քելութիւնը՝ հանդէպ ողջ մարդկութեան:

Թուրքիոյ մէջ գործող հայ բժիշկները անմասն չեն մնացած հայ ժողովուրդի գողգոթայէն: Ջար-դարար թուրքը չէ խնայած հայ բժիշկը, անոր, որ ամբողջական նոփրումով ծառայած էր հայրենի-քին եւ թուրք ժողովուրդին:

1915-ին, Հայոց ցեղասպանութեան արհաւիրքի օրերուն, հայ բժիշկներու մեծ խմբակ մը անցած է հաւատարիմ՝ բժշկական իր սապարուժ բարոյա-խօսութեան եւ գործած է իր միջավայրին մէջ՝ օգ-տակար հանդիսանալով թէ՛ հայերուն եւ թէ՛ թուր-քերուն, հակառակ անոր որ անոնցմէ շատերը կորսնցուցած էին իրենց ընտանիքները եւ հարա-գատները:


Եղեռնի առաջին օրերուն հայ բժիշկները իրենց արիւնակիցներուն հետ միասին ձերբակալուած են, բանտարկուած են, տարագրուած են անմարդ-կային չարչարանքի ենթարկուած են թուրք ճիւա-ղային ձեռքերով՝ պարզապէս հայածին ըլլալուն եւ հայ անունով մկրտուած ըլլալուն պատճառով: Անոնք արժանապատուութեամբ մաս կազմած են հայ նահատակներու մեծ փաղանգին: Այս բոլորը թրջավայել վարձատրութիւնն էին հայ բժիշկնե-րուն, որոնք դարձած էին ամբողջ Թուրքիոյ բժշ-կական մարզին հիմնական սիւները:

Հայ բժիշկներէն շատերը Ցեղասպանութեան տարիներուն իրենց բժշկական ծառայութեան եւ կամ ձերբակալութեան ու բանտարկութեան ըն-թացքին վարակուած են ժանտախտէ: Անոնք եր-կար տարիներ պայքարած են այս հիւանդութեան դէմ եւ ի վերջոյ մահացած են:

Որոշ թիւով հայ բժիշկներ, ականատես ըլլալէ ետք Հայոց ցեղասպանութեան աննախընթաց բո-լոր փուլերուն եւ հայ ժողովուրդի տաժանակիր կեանքին ու անձամբ թրջակայն բանտերուն եւ զօ-րանոցներուն մէջ չարչարուելէ ետք, վերապրած են նախախնամութեան ներգործութեամբ: Անոնք եղած են ցիր ու ցան, տարածուած են աշխարհի չորս ծագերը եւ շարունակած են իրենց բժշկական առաքելութիւնը՝ ծառայելով համայն մարդկու-թեան անխտիր:

Երդմնադրուած թուրք բժիշկներ իրենց արիւնար-բու ձեռքերով խողխողած են հայրենիքին նոփր-եալ հայ բժիշկները եւ եղած են դաժնապետները իրենց գործակից, պարտաճանաչ հայ արիեստա-կիցներուն: Ջարդարար թուրք բժիշկները առաջ-նորդուած են մոլեռանդ ազգայնամոլութեամբ եւ կծու նախանձով՝ հայ բժիշկներու գերազանցու-թեան, բժշկական բարձր մակարդակին, հմտու-թեան, դիրքերուն եւ պաշտօններուն նկատմամբ:

Թուրք բժիշկներու այս դերակատարութիւննե-րը բացայայտօրէն ի յայտ եկած են 1918-1919-ի թրջական զինուորական դատավարութիւններուն



ընթացքին, որոնք տեղի ունեցած են Իթթիհատ կուսակցութեան հինգ դե-կավարներու մասնակցու-թեամբ: Չինուորական դատարանին եզրակա-ցութիւններուն համա-ձայն, հայկական ջարդե-րուն պարագլուխներէն եղած են հետեւեալ երդմ-նադրուծ թուրք բժիշկնե-րը. Նազիմ, Պահաւտտին Շաքիր, Սիւլէյման փաշա Նեման, Համիտ Սուատ, Ալի Սայիպ, Ֆայիք, Մեհ-մետ պէյ Ռաշիտ, Ֆազիլ Պեքրի, Մեհմետ Հասան, Ասաֆ Մուշի, Ֆերիտոն, Շեքեր Սանի Եաւեր:

Վերոյիշեալ թուրք բժիշկներուն կողքին, հե-տեւեալ թուրք բժիշկները զանազան դերակատա-րութիւններով մասնակ-ցած են Հայոց ցեղասպա-նութեան՝ Իպրահիմ Թա-

լի, Ֆուատ Սապի, Հիւսէյն Ռիզա, Ռիֆքի, Սերվեթ, Հիւմի, Սիտքի, Էշրեֆ, Իզգեթ պըն Էմին, Ապտալ-լա, Ռուշտի պէյ պըն Հաճի Հիւսէյն, Պեւիմ Չուհտի, Միտհատ, Չիւս եւ Ֆեթիի:

Կարգ մը թուրք բժիշկներ անձամբ եւ կամ ու-րիշներու մեղսակցութեամբ սուտ բժշկական վկա-յագրեր տուած են նահատակուած հայերու անու-



նով: Օրինակի համար, Ուրֆայի թաղապետական բժիշկ Թահսին բժշկական սուտ վկայագիր տուած է՝ ըսելով, որ Գրիգոր Չոհրապ սրտի տաճնապով մահացած է Ուրֆայէն Տիգրանակերտ ճամբոր-դած ատեն, ինք նախապէս տեսած է հիւանդ Գրի-գոր Չոհրապը Ուրֆայի մէջ ու փաստած է անոր սրտի հիւանդութիւն ունենալը եւ ինք ըստ այնմ դարմանած է Չոհրապը: Ասոր կողքին, ոճրագործ բժիշկը ստիպած է տեղւոյն քահանային՝ Վանես Օղլու Հայրապետին, որ վկայագիր մը տայ՝ ըսե-լով, որ կրօնական օրինաւոր թաղում ըրած է Գրի-գոր Չոհրապին: Տէր Վանես քահանայն պարտադ-րաբար այդպիսի վկայագիր մը տուած է:

Ուրիշ թուրք բժիշկներ կատարած են նաեւ ան-մարդկային եւ հրէշային անդամահատումներ շատ մը հայ աղջիկներու վրայ՝ յագեցնելու համար իրենց վատառողջ սեռային փափաքը: Շատեր խոստովանած են, թէ ի՛նչ մեծ հաճոյքով եւ մոլեգ-նորէն իրենց պապակը կը յագեցնէին անչափա-հաս՝ 12 տարիքը չբոլորած հայ արքանուհիներու կուսութիւնը ըմբշխնելով եւ դիտելով իրենց պղո-ծած հայ աննշուհիներու գոհաբերումը իրենց ձեռքով սարքուած բազիկներու վրայ:

Թուրք ակնաբուժներէն ոմանք նոյնպէս ունե-ցած են շատ մեծ դերակատարութիւն: Անոնք, փո-խանակ դարմանելու իրենց ներկայացած հայ հի-ւանդներուն աչքերը, գործածած են այնպիսի դե-ղեր, որոնք պատճառած են տեսողութեան կո-րուստ: Այս բժիշկներէն մէկը Գոնիայի մէջ ըսած է իր թուրք գործակիցին. «Այս ձեռով մենք կ'ընենք. մենք պէտք է շաքաթը մէյ մը մէկ հայ մը կուրցը-նենք»:

Նահատակուած բժիշկներէն եւ դեղագործնե-րէն անկախ, եղած են մեծ թիւով հայ բժիշկներ, դեղագործներ եւ բուժաշխատողներ, որոնք պա-տերազմի, տեղահանութեան եւ Ցեղասպանու-թեան պատճառով կորսնցուցած են իրենց ընտա-նիքի անդամները եւ հարազատները, պապենա-կան կալուածներն ու տունները, ինչքն ու հարստու-թիւնը, եւ մագապուած փախչելով՝ ապաստան գտած են հարեան երկիրներու մէջ: Հետագային անոնք ցրուած են աշխարհի չորս ծագերը եւ մաս կազմած են այսօրուան տխուր իրողութիւնը հան-դիսացող «ՍՓԻՒՌԵ»-ին: Անոնք մէկ մասը իր վախ-ճանք գտած է օտար ափերուն կամ ձուլուած է տե-ղաբնակ ժողովուրդներու մէջ:

Եղած են նաեւ մեծ թիւով հայ բժիշկներ, դեղա-գործներ, ատամնաբուժներ, որոնք ձերբակալ-ւած են ու բանտարկուած՝ Զանդըրդի եւ Այաշի բանտերուն մէջ, ենթարկուած են տաժանակիր չարչարանքներու, սակայն բախտի բերմամբ ազատած են ստոյգ մահէն: Անոնք վերադարձած են Պոլիս եւ վերապրած են: Անոնք բոլորն ալ ծա-ռայած են օսմանեան բանակին մէջ: Եղած են անուանի բժիշկներ եւ հանրածանօթ ազգային-հասարակական գործիչներ, կուսակցականներ եւ մտաւորականներ: Վերապրողներէն շատերը

ԲԺԻՇԿ ԿԱՐՊԻՍ ՀԱՐՊՈՅԵԱՆ

Շար.ը՝ Էջ 6

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍԵԹՊՈԼ

ԱՅՍՕՐ՝ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՅՐՈՒԹ - «ԷՆ. ԷՍ. ԷՅ.» ԵՒ ՊԻՊԼՈՍ - ԱԹԼԱՍ

Լիբանանի տղոց պասեթպոլի Ա. դասակարգի ախոյեանութան 2022-2023 տարեշրջանի 15-րդ հանգրուանի մրցումներուն ծիրին մէջ, այսօր կը կատարուին երկու մրցումներ:

Առաջինին, որ պիտի սկսի յետմիջօրեի ժամը 16:45-ին, Անդրանիկ Պէյրուբ ՅԸԸՄ-ի «Տեմիրճեան» կեդրոնին մէջ (Նաքքաշ) կը հիւրընկալէ «ԷՆ. ԷՍ. ԷՅ.»-ը, մինչ երկրորդին, որ տեղի պիտի ունենայ Միշել Սլէյմանի անուան համալիրին մէջ, Պիպլոս՝ Աթլասը, երեկոյեան ժամը 19:30-ին:

9-րդ դիրքին վրայ գտնուող Անդրանիկ ցարդ արծանագրած է 4 յաղթանակ եւ կրած 10 պարտութիւն, մինչ «ԷՆ. ԷՍ. ԷՅ.» (8-րդ)՝ 5 յաղթանակ եւ 9 պարտութիւն:

Ինչ կը վերաբերի երկրորդ մրցումին, Պիպլոս (12-րդ) արծանագրած է յաղթանակ մը միայն եւ կրած 13 պարտութիւն, իսկ Աթլաս (11-րդ)՝ 4 յաղթանակ եւ կրած 10 պարտութիւն:

ՃԱՏՐԱԿ. «ԹԱԹԱ ՍԹԻԼ ՄԱՍԹԵՐԸ»

ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԻ ՀԱՒԱՍԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԱՐՔԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԵՑԱՒ



Նետերլանտներու Վիյք Աան Չի քաղաքին մէջ տեղի ունեցող ճատրակի «Թաթա Սթիլ Մասթըրզ» միջազգային մրցաշարքին մասնակցողները, միօրեայ դադարէ մը ետք, կատարեցին 9-րդ հանգրուանի մրցումները:

Միացեալ Նահանգներու դրօշին տակ հանդես եկող Լեւոն Արոնեան, որ ճերմակ քարերով մրցեցաւ Նետերլանտցի ժորտեն վան Ֆորիսթի հետ, անոր հետ արծանագրեց հաւասարութիւն մը՝ 31-րդ շարժումին:

Հայաստանի հաւաքականի նախկին յառաջատարը այսպիսով արծանագրեց իր 8-րդ հաւասարութիւնը (յաջորդական՝ չորրորդը):

10-րդ հանգրուանին եւս Արոնեան արծանագրեց հաւասարութիւն մը, այս անգամ՝ հունգարացի Ռիշար Ռափորի հետ:

Արոնեան իր միակ յաղթանակը արծանագրեց 5-րդ հանգրուանին՝ պարտութեան մատնելով գերմանացի Վենսան Զէյմերը:

Այս հանգրուանէն ետք, այժմ Արոնեան, որ ցարդ ապահոված է 5,5 կէտ, կը գրաւէ դասաւորման 5-րդ դիրքը:

Ուզպեքիստանի ներկայացուցիչ Նուիրպէկ Ապտուսաթարով, որ այս հանգրուանին հաւասարութիւն մը արծանագրեց Վենսան Զէյմերի հետ, այժմ 7 կէտով միանձնեայ կը շարունակէ գլխաւորել դասաւորման պարագլուխի դիրքը:

ԱՇԽԱՐՀԻ ՖՈՒԹՊՈԼԻ ԱՆՈՅԵԱՆ ԱԼԵՆ ՊՕՂՈՍԵԱՆ ՄԱՐԶԱՇԽԱՐԿԻ ՆՈՒԵՐ ՍՏԱՑԱՒ ԱԼԱՆԻԱՅԷՆ



Ռուսիոյ ֆութպոլի Ա. դասակարգին մէջ հանդես եկող կազմերէն Ալանիա Վլատիքաւքազ, որուն հետ ելոյթ կ'ունենայ Հայաստանի ազգային հաւաքականի միջնապահ Արթուր Գալստեան, մարզաշապիկ նուիրեց 1998-ի Մոսկովային Ֆրանսայի ֆութպոլի ազգային խումբին հետ աշխարհի ախոյեան հանդիսացած միջնապահ Ալեն Պօղոսեանին:

Ներկայիս 52 տարեկան Պօղոսեան, չեմպիօն ընդունեց նուէրը եւ Ալանիային մաղթեց յաջողութիւն՝ տարեշրջանին երկրորդ բաժինին համար, այս մասին յայտնեց ռուսական ակումբին մամլոյ քարտուղարութիւնը:

Նշենք, որ Թուրքիոյ մէջ տեղի ունեցող Ալանիայի մարզական հաւաքը, որուն կը մասնակցի նաեւ Արթուր Գալոյեան, իր աւարտին կը հասնի 26 փետրուարին:

ՓԻՒՆԻԿ ԹՈՒՐՔԻՈՅ ՄԷՋ ՅԱՂԹԵՑ ՌՈՒՄԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՅԻՆ ՄԱՐԶԱԿԱՆ ԱԿՈՒՄԲ ԽԱՊԱՐՈՎԱՔԻՆ

Հայաստանի ֆութպոլի ախոյեան Փիւնիկ Երեւան, որ թրքական Պելեք քաղաքին մէջ ուսումնամարզական համարգական հաւաքը կը կատարէ, կատարեց ֆութպոլի իր բարեկամական երկրորդ մրցումը, այս անգամ մրցելով ռուսական բաւնակային մարզական ակումբ-Խապարովսքի խումբին դէմ, որ մաս կը կազմէ Ա. դասակարգին:

Եղիշէ Մելիքեանի գլուխաւորած կազմը 4-2 արդիւնքով յաղթանակ մը արծանագրեց:

Երեւանեան կազմին հետ իրենց առաջին կողմ նշանակեցին Նորեկներ՝ Ժոնէ Տեգիրե եւ Ճէյմս Սանթոս:

Իսկ ռուսական կազմին կողերէն մէկը նշանակեց, Հայաստանի հաւաքականի միջնապահ Իշխան Գելոյեան՝

Ֆիւնալիով:

Նշենք, որ իր կատարած առաջին մրցումին, Փիւնիկ 3-1 արդիւնքով պարտուած էր ուքրաինական Տնիփո-1 խումբէն:

Կ'անկկալուի, որ հայրենի կազմը բարեկամական հինգ մրցում եւս կատարէ:



ՍՊԵՐՑԵԱՆ ԿԵՐՏԵՑ ՔՐԱՄՆՈՏԱՐԻ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Ռուսական Քրասնոտար ակումբը, որ Տուլայի մէջ (Արաբական Միացեալ Եմիրութիւններ) ուսումնամարզական հաւաք մը կը կատարէ, իր կատարած ֆութպոլի բարեկամական առաջին մրցումին 1-0 արդիւնքով յաղթեց Պուստոկորի (Ուզպեքիստան):

Մրցումին միակ կողմ 14-րդ վայրկեանին փենալթիով նշանակեց Հայաստանի ֆութպոլի ազգային հաւաքականի միջնապահ Էդուարդ Սպերցեան:

Ասիկա Քրասնոտարի առաջին յաղթանակն էր սերպ մասնագետ Վլատիմիր Իվիչի գլխաւորութեամբ:

Նշենք, որ ընթացիկ տարեշրջանին Սպերցեան Քրասնոտարի կազմին հետ ցարդ մասնակցած է պաշտօնական 22 մրցումի, նշանակած 11 կոլ եւ կատարած 6 Էսիսք:




ԿԱՐԷՆ ՆԱԲԱՆՏԵԱՆ ՄԻԱՑԱՒ ԱԼԱՇԿԵՐՏԻ

Հայաստանի ֆութպոլի բարձրագոյն դասակարգի ախոյեանութեան մէջ հանդես եկող կազմերէն Ալաշկերտի մամլոյ քարտուղարութիւնը հաղորդեց, որ Հայաստանի Երիտասարդական հաւաքականի միջնապահ Կարեն Նալբանտեան միացաւ Երեւանեան ակումբին:

20 տարեկան ֆութպոլիստը հանդես եկած է հայկական ծագումով ռուսական Վիսթա ակումբին, Նորավանքի կազմին հետ հանդիսացած է Հայաստանի բաժնականի, իսկ Ալաշկերտ տեղափոխուեցաւ Նոյեմբեր:

Նշենք, որ ան մաս կազմած է նաեւ Հայաստանի 17 եւ 19 տարեկանէն վար ֆութպոլի հաւաքականներուն:



«ԶԱԼԶԻՈ»

ԼԱՅԻՕ ՌՈՄԱՆՍ. ՍԷ. ՄԻԼԱՆ ՄՐՅՈՒՄՈՎ ԱՒԱՐՏԵՑԱՆ 19-ՐԴ ԵՒ ԵՐԹԻ ՎԵՐՋԻՆ ՀԱՆԳՐՈՒՄԵՆԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

Իտալիոյ ֆութպոլի Ա. դասակարգի ախոյեանութեան (Զալչիօ) 2022-2023 տարեշրջանի 19-րդ եւ երթի վերջին հանգրուանի մրցումները հասան իրենց աւարտին, երբ Յոմի մէջ Լացիօ Ռոմա հիւրընկալեց երկրի գործող ախոյեան Ա. ՍԷ. Միլանը:

Այս մրցումը վերջ գտաւ Մաուրիցիօ Սարրիի գլխաւորած կազմին յաղթանակով, որ 4-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց միլանեան կազմը:

Յաղթական կազմին չորս անպատասխան կոլերը նշանակեցին Սերկէյ Միլինքովիչ-Սալիչ (4-րդ), Մաթիա Չաբակի (38-րդ), Լուիս Ալպերթօ (67-րդ) փենալթիով եւ Ֆելիպէ Աստերսոն (75-րդ):

Իր արծանագրած այս յաղթանակին շնորհիւ, Լացիօ Ռոմա բաւական մօտեցաւ երկրորդ դիրքին վրայ գլուխուղ Ա. ՍԷ. Միլանին (որ ունի 38 կէտ) եւ անկէ այժմ միայն կէտով մը ետ կը մնայ:

Ընդհանուր դասաւորման պարագլուխի դիրքը 50 կէտով կը գրաւէ Նափոլի, որ ցարդ կրած է պարտութիւն մը միայն:

Նշենք, որ Լացիօ Ռոմայի նման 37-ական կէտ ունին նաեւ Ինթեր Միլան (4-րդ) եւ Ա. Էս. Ռոմա (5-րդ):

Իսկ 20-րդ եւ վերջին դիրքին վրայ գտնուող Զերմոնեզէ միակ խումբն ըլլալով ցարդ յաղթանակ չէ կրցած արծանագրել:

Նշենք, որ դարձի մրցումները կը սկսին այսօր՝ ուրբաթ, 27 յունուարին, երբ կը կատարուին երկու մրցումներ:



ՃՈՔՈՎԻԶ ԿՐԿՆԵՑ ԱՂԱՍԻՒ ՄՐՅԱՆՇԱՅԻՆ ՅԱՂԹԱԿԱՆ ՇԱՐՔԸ

Թենիսի իր առիտով վարժ ապարեզին ընթացքին 21 կրան շլեմի տիտղոսներու տիրացած սերպ անուանի թենիսմէն՝ Նովաք Ճոքովիչ Աւստրալիոյ կրան շլեմի միջազգային բաց մրցաշարքի ծիրին մէջ արծանագրեց իր 26-րդ յաջորդական յաղթանակը՝ քառորդ աւարտականի մրցումներուն գծով պարտութեան մատնելով աշխարհի ընդհանուր դասաւորման 6-րդ դիրքին վրայ գտնուող ռուս Անտոն Բուպլեք:

Աշխարհի միջազգային դասաւորման մէջ 5-րդ դիրքին վրայ գտնուող Ճոքովիչ այսպիսով կրկնեց ամերիկացի Անտոն Ադասիի մրցանշային ցուցանիշը, որ արծանագրուած էր 2000-2004 ժամանակամիջոցին:

Իր կատարած 27-րդ մրցումին, Ադասի պարտուած էր ռուս Մարաթ Սաֆինէն:

Նշենք, որ 2011-2014 ժամանակամիջոցին Ճոքովիչ արծանագրած էր յաջորդական 25 յաղթանակ, սակայն 26-րդին պարտուած էր գուիցերիացի Սթախիսաւ Վաւրիւքայէն:

Այժմ, ընթացիկ ախոյեանութեան, Ճոքովիչ, որ կիսաւարտականին պիտի մրցի ամերիկացի Թոմի Փոլի դէմ, յաղթանակի մը պարագային պիտի գերազանցէ Ադասին:



ԹԵՆԻՍ. ԱՄՏՐԱՆԻՈՅ
ԲԱՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ

ՑԻՑԻՓԱՍ ԱՊԱՀՈՎԵՑ ԿԻՍԱԲԱՐՏԱԿԱՆԻՆ ԻՐ ՏՈՍՍԸ ԵՒ ԿԸ ՄՐՑԻ ԽԱՉԱՆՈՎԻ ԳԷՄ

Տղոց թենիսի աշխարհի միջազգային դասաւորման 4-րդ դիրքին, իսկ այս մրցաշարքին գծով 3-րդ դիրքին վրայ գտնուող յոյն Սթեֆանոս Ցիցիփաս, որ Աւստրալիոյ կրան շլեմի միջազգային բաց մրցաշարքի քառորդ աւարտականի մրցումներուն, մրցեցաւ աշխարհի դասաւորման 71-րդ դիրքին վրայ գտնուող չեխ Երիկ Լեիքցայի դէմ, արծանագրեց 6-3, 7-6 եւ 6-4 արդիւնքով յաղթանակ մը:

Կիսաւարտականին 24 տարեկան Ցիցիփաս պիտի մրցի 26 տարեկան եւ 18-րդ դասուած ռուսահայ Կարեն Խաչանովի դէմ:

Նշենք, որ ախոյեանութեան մրցանակային հիմնադրամը կը կազմէ 51,3 միլիոն ամերիկեան տոլար:



ԹԵՆԻՍ. ԱՄՏՐԱՆԻՈՅ
ԲԱՅ ԱՆՈՅԵԱՆՈՒԹԻՆ


ԱՂԶԱՆՅ ԿԻՍԱԲԱՐՏԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒՄԵՆԻ ՀԱՄՆՈՂ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ ՅՍԱԿԱՅԱՆ

Աւստրալիոյ թենիսի կրան շլեմի միջազգային բաց մրցաշարքին աղջկանց կիսաւարտականի վերջին տուփը ապահովողը հանդիսացաւ Պիելոն ռուսիոյ ներկայացուցիչ Արինա Սապալա եւ Զառա (դասուած՝ 5-րդ), որ քառորդ աւարտականին գծով իր կատարած մրցումին 6-3 եւ 6-2 արդիւնքով յաղթեց խրուաթ Տոննա Վեքիչի:

Կիսաւարտականի մրցումներուն անոր մրցակիցը պիտի ըլլայ Մակտա Լիւնթ (Լեհաստան):

Իսկ կիսաւարտականի երկրորդ մրցումը իրարու դէմ պիտի հանէ 22-րդ դասուած Էլենա Ռիպաքիան (Ղազախստան) եւ 24-րդ դասուած Վիքթորիա Ազարենքան (Պիելոնուսիա):

Նշենք, որ այս մրցաշարքին գծով առաջին անգամ ըլլալով Է, որ կիսաւարտական հանգրուան կը հասնին Պիելոնուսիոյ երկու ներկայացուցիչներ:



«ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱԿԱՌԱՎՈՐԳՆԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՅԻ
ՀԱԿԱՌԱՎՈՐԳՆԵՐՆ ԵՆ»

Կ'ԸՍԵ ՖԻՆԱՆՍԱՅԻ
ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԸ

Հայաստանի հա-կ ա ռ ա կ ո ղ ն Ե Ր Ը Ֆրանսայի հակառա-կորդներն են: Այս մա-սին Ֆրանսայի հայ-կական կազմակեր-պությունները համա-կարգող խորհուրդի ընթերցի ընթացքին յայտարարած է Ֆրան-սայի ներքին գործոց նախարար Ժերալտ Տարմանենը: Այս մա-սին «Թուիթթը»-ի վրայ գրառման ճամբով կը հաղորդէ Հայաստանի մէջ Ֆրանսայի նախկին դես-պան Ճոնաթան Լաքոթ:



«Հայաստանի հակառակորդները Ֆրանսայի հա-կառակորդներն են, յայտարարած է Ժերալտ Տար-մանենը՝ ներքին գործոց նախարարը, որ Ֆրանսայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդի ամենամեայ ընթերիքին ներկայացուցած է նախագահը եւ կառավարությունը», կը գրէ Լաքոթ:

ԱՐՅԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉՆԵՐԸ ...

Շարունակուած Ա. Էջէն

Նիստերը գումարուած են՝ համաձայն յանձնա-խումբին կողմէ նախորդ շաբաթ միաձայնութեամբ որոշեցրուած որոշումին, որուն նախագիծը ներկայա-ցուած էր «Զեպէքի պլոք» խմբակցութեան անդամ Սթեֆան Պերկերոյի կողմէ, որ պահանջած էր նուա-զագոյնը երեք հանդիպումներ, որոնց ընթացքին յանձնախումբի անդամները կարելիութիւն կ'ունե-նան լսելու Արցախի Հանրապետութիւնը ներկայացը-նող անձերու, ինչպէս նաեւ փորձագէտներու եւ քա-նատահայ համայնքի ներկայացուցիչներու:

Քանատական խորհրդարանին մէջ կայացած նիստերու բացառիկ բնոյթն ու պատմականութիւնը անոր մէջ է, որ առաջին անգամ ըլլալով Արցախի Հանրապետութեան պետական ներկայացուցիչները հանդէս եկան քանատական խորհրդարանին առջեւ եւ ներկայացուցին Արցախի բնակչութեան պայքարը յանուն արժանապատիւ կեանքի: Առաջին հանդի-պումին մասնակցած են ՀՀՊ Քանատայի Հայ դատի յանձնախումբի համանախագահ Շահեն Միրաք-եան, դոկտ. Թալին Փափագեան, Միացեալ Նահանգ-ներու եւ Քանատայի մէջ Արցախի Հանրապետու-թեան ներկայացուցիչ Ռոպերթ Անտիսեան եւ Արցա-խի մարդու իրաւունքներու պաշտպան Գեղամ Ստե-փանեան: Երկրորդ հանդիպումին մասնակցած են «Միջազգային ճգնաժամային խումբ»-ի Հարաւային Կովկասի հարցերով աւագ վերլուծաբան Օլեսիա Վարդանեան եւ Ռինտսըրի համալսարանի իրա-ւունքի փրոֆեսոր Զրիսթֆօր Ուոթըրզ:

Հրաւիրեալները, իւրաքանչիւրը իր մասով հան-գամանօրէն անդրադարձած են ստեղծուած կացու-թեան: Կարելոր նկատուած է Քանատայի կողմէ Ազրպէյճանի վրայ միջազգային ճնշման իրականա-ցումը, որպէսզի վերջինս վերջ տայ իր ցեղասպան քաղաքականութեան:

Արցախի Հանրապետութեան ներկայացուցիչնե-րը յանձնախումբի անդամներուն ներկայացուցած են իրական փաստեր՝ առնչուած մարդասիրական ծանր հետեւանքներու եւ Ազրպէյճանի ցեղասպանա-կան յարձակումի հետեւանքներուն, ինչպէս նաեւ Արցախի Հանրապետութեան առաջնահերթութիւն-ները եւ ազատ ու անկախ կեանքի տեսլականը:

ՀՀՊ Քանատայի Հայ դատի յանձնախումբը շնոր-հակալութիւն կը յայտնէ խորհրդարանական յանձ-նախումբի անդամներուն այս կարելոր հարցին մէջ օժանդակութեան համար եւ հաստատակամ է շա-րունակելու ջանքերը՝ Արցախի շրջափակման վերջ տալու եւ Արցախի ձայնը լսելի դարձնելու ուղղու-թեամբ:

26 յունւար 2023

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԸ ԼՈՒՐԵՐ

Շարունակուած 2-րդ Էջէն

մէջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնակա-ն ներկայացուցիչ Եոաննա Վրոնցեան, որուն հետ քն-նարկեց երկրին մէջ տիրող կացութիւնը: Ժմայել Նշեց, որ միջազգային ընտանիքը պէտք է օժանդակէ լիբանանցիներուն՝ վերատիրանալու իրենց հաստա-տութիւններուն: Ան անհրաժեշտ նկատեց, որ Լիբա-նանի մէջ դատական իշխանութիւնը պահպանէ իր անկախ գործունեութիւնը:

●ԼԻԲԱՆԱՆԵԱՆ բանակի հրամանատար գոր. Ժո-զեֆ Աուս ընդունեց հարաւային Լիբանանի մէջ տե-ղակայուած ՖԻՆԻԼԻ-ի միջազգային խաղաղապահ ուժերու հրամանատար գոր. Արդլոտ Լասարոն: Քննարկուեցան ՖԻ-ՆԻԼԻ-ին եւ լիբանանեան բանակին միջեւ գոր-ծակցութեան հեռա-նկարները:

●ԺԱԼ ԷԼ ՏԻՊԻ մէջ սպանուեցաւ լուսայա-փոխ մը. անոր սպանու-թեան դրոպապատճառնե-րը կը մնան անորոշ:

ՄՈՍԿՈՒԱ «ԵԹԷ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՇԱՀԱԳՐԳՈՒՈՒԱԾ Է, ՀԱՊԿ-Ի
ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ԱՐԱԳ ՏԵՂԱԿԱՅՈՒՒԼ ԵՐԿՐԻՆ ՄԷՁ.
ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՅԱՅՏՆՈՒԻԼԸ ԿՐՆԱՅ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԱԿԱՏՈՒՄԻ ՅԱՆԳԵՑՆԵԼ»

23 յունւարին, Եւրոպական Միութեան խորհուրդը որոշում որդեգրած է Հայաստանի մէջ Եւրոպական Միութեան քաղա-քային նոր առաքելութիւն ստեղծելու մասին՝ երկու տարի ժամկետով: Եւրոպական Միու-թեան ներկայութեան որոշակի շրջագիծերը յառաջիկային պի-տի որոշուին: Սակայն արդէն ակնյայտ է, որ անիկա աւելի յաւակնոտ պիտի ըլլայ, քան Եւ-րոպական Միութեան հսկողու-թեան մեքանիզմը, որ Հայաս-տանի մէջ գործած է անցեալ տարուան հոկտեմբերէն դէկ-տեմբեր ամիսներուն: Այս մա-սին նշուած է Ռուսիոյ արտա-քին գործոց նախարարութեան կայքին վրայ հրապարակուած հաղորդագրութեան մէջ:

«Անդրկովկասի մէջ ար-տաշրջանային գործօնի ամ-րապնդման հարցին մէջ Ռու-սիոյ սկզբունքային դիրքորոշու-մը չէ փոխուած: Մենք, հայ-ազրպէյճանական սահմանի տարածքին մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն նկատ-մամբ Եւրոպական Միութեան

«փորձագէտներու» վերահսկո-ղութեան լոյսին տակ, որեւէ «յաւելուած արժէք» չենք տես-ներ: Եթէ Պրիքսեյը անկեղծօ-րէն ձախագրգռուած ըլլայ Անդրկովկասի մէջ խաղաղու-թեամբ, ապա իր առաքելութեան աշխատանքի պայմաններուն շուրջ համաձայնութիւն պիտի գոյացնէր Ազրպէյճանի հետ:

Միացեալ Նահանգներու եւ ՕԹԱՆ-ի կցորդի վերածուած է ԱՊՀ տարածքին մէջ ճակատ-ման քաղաքականութիւն վա-րող Եւրոպական Միութեան ներկայացուցիչներու յայտնուի-լը Հայաստանի սահմանամերձ շրջաններուն մէջ կրնայ միայն աշխարհաքաղաքական ճակա-տում բերել շրջան եւ արել գոյու-թիւն ունեցող հակասութիւննե-րը:

Եւրոպական Միութեան առաքելութեան յայտարար-ւած քաղաքային բնոյթը եւս պէտք չէ մոլորեցնող ըլլայ. անի-կա կը ձեւատրուի Եւրոպական Միութեան ընդհանուր ան-վտանգութեան եւ պաշտպա-նութեան քաղաքականութեան

ծիրին մէջ՝ ատկէ բխող բոլոր հետեւանքներով:

Եւրոպական Միութեան՝ Հա-յաստանի մէջ ամէն գնով ամ-րապնդուելու եւ Ռուսիոյ միջ-նորդական ջանքերը ետ մղելու փորձերը կրնան վնասել հայե-րու եւ ազրպէյճանցիներու հիմ-նարար շահերը՝ շրջանի խա-ղաղ զարգացման վերադառնա-լու անոնց ձգտումներուն մէջ: Համոզուած ենք, որ տեսանկի ապագային շրջանին մէջ կայու-նութեան եւ անվտանգութեան առանցքային գործօնները կը մնան Ռուսիոյ, Ազրպէյճանի եւ Հայաստանի ղեկավարներու 9 նոյեմբեր 2020-ի, 11 յունւար եւ 26 նոյեմբեր 2020-ի յայտարարու-թեան հիման վրայ տեղակայ-ւած ռուսական խաղաղապահ զորախումբը, ինչպէս նաեւ Հա-յաստանի սահմաններուն ծա-ռայող Ռուսիոյ սահմանապահ-ները: Անոնք Եւրոպական Միու-թեան դէտերու պահուածքին պիտի արձագանգեն՝ հաշուի առնելով «տեղւոյն վրայ» կա-ցութեան զարգացումը:

Մենք կը ճշդենք, որ Երեւանի մէջ, առանց իր տրամաբանա-կան աւարտին հասցնելու ՀԱՊԿ-ի առաքելութեան ուղղութեամբ աշ-խատանքները, գերադասած են ընտրութիւն կա-տարել յօգուտ ԵՐՈԱԿԿԼՆ

միջնորդութեամբ կը շարունակուի քա-ղաքային նշանակութեան ապրանքնե-րու եւ քաղաքայիններու փոխադրումը: Ազրպէյճանի նախագահը ըսած է, թէ 12 դէկտեմբերէն սկսեալ միջանց-քով երկու ուղղութիւններով անցած է աւելի քան հազար փոխադրամիջոց: Ալիե Ֆրանսայի դեսպանին հետ գրոյցի մէջ ընդգծած է «Ազրպէյճանի տարածքին մէջ՝ ռուս խաղաղապահ-ներու ժամանակաւոր տեղակայման գոտիին մէջ օգտակար հանածոներու ապօրինի արդիւնահանման անթոյ-լատրելիութիւնը» եւ ըսած. «Այդ շրջա-նին մէջ անհրաժեշտ է մշտադիտար-կում ապահովել»:

ԱԼԻԵԻ ԲԵՐՁՈՐԻ ՄԻՋԱՆՅՔԻ ՓԱԿՄԱՆ
ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
«ԲԱՅԱՐՁԱԿ ՍՈՒՏ» ԿԸ ԿՈՉԷ

Ազրպէյճանի նախագահ Իլիամ Ալիե Յայաստանի՝ Բերձորի միջանց-քի փակման մասին յայտարարութիւն-ները «բացարձակ սուտ եւ անհեթեթու-թիւն» կոչած է: Այս մասին կը հաղորդէ «Ազատութիւն» ծայնասփիւռի կայա-նը՝ յղում կատարելով ազրպէյճանա-կան «Թերեստ» լրատու գործակալութե-ան:

Այդ նիւթին շուրջ ան գրուցած է Ազըր-պէյճանի մէջ Ֆրանսայի նոր նշանակ-ւած դեսպան Ան Պույոնի հետ՝ անկէ հաւատարմագիրները ստանալէ ետք:

Ալիե պնդած է, թէ Բերձորի մի-ջանցքի երկու ուղղութիւններով Կար-միր խաչի եւ ռուս խաղաղապահներու

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՔՈՆԿՐԵՍԱԿԱՆՆԵՐԸ ԲԱՆԱՁԵԻՈՎ ...

Շարունակուած Ա. Էջէն

Երկկուսակցական բանաձեւին մէջ կը նշուի, որ ազրպէյճանական ուժերը կը խախտեն Հայաստանի եւ Արցախի հետ վեճերը խաղաղ ճամբով լուծելու միջազգային պարտաւորութիւնները՝ 2020 թուականին իրենց սանձազեր-ծած պատերազմէն ետք: Բանաձեւին մէջ նաեւ կը նշուի, որ Ազրպէյճանի նախագահ Ալիեյը հռետորաբանու-

թիւն օգտագործած է՝ կոչ ուղղելով Լեռնային Ղարաբաղի մէջ ցեղային զգուժմէր իրականացնելու բնիկ հայե-րու նկատմամբ, եւ անոր վարչակարգը հետեւողականօրէն խախտած է կա-րելոր միջազգային մարդասիրական իրաւական համաձայնագիրները 2020 թուականի պատերազմի ընթացքին եւ մինչեւ օրս:

ՉԵԼԵՆՍՔԻ ՕԹԱՆ-ԵՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Ատիկա համագոր է մէկ ուշքանա-կան գումարտակին: Պաշտպանու-թեան նախարար Լոյտ Օսթին մեզի խոր-հուրդ տուած է այս քայլին դիմելու, որովհետեւ ատիկա Ուշքանիոյ պիտի արտօնէ ամրապնդել իր պաշտպանու-թիւնն ու ռազմավարական նպատակ-ներու հասնիլ», յայտարարեց Պայտըն: «Ապրամզ»-ները աշխարհի ամենէն մարտունակ հրասայլերն են, սակայն անոնց կիրարկումն ու սպասարկումը

բաւական բարդ գործ է: (...) «Ապ-րամզ»-ներու մատակարարումը ժա-մանակ պիտի պահանջէ. ժամանակ, որուն ընթացքին մենք պէտք է համոզ-ւինք, որ ուշքանացիները ի վիճակի են այդ հրասայլերը ներդաշնակեցնել իրենց պաշտպանական համակարգե-րուն», ըսաւ Միացեալ Նահանգներու նախագահը:

Սպիտակ տան նախագահին համա-ձայն, հրասայլերու մատակարարման մասին որոշումը տրուած է ՕԹԱՆ-ի դաշնակիցնե-րու հետ երկարատեւ քննարկումներէ ետք:

Պայտըն շնորհակա-լութիւն յայտնեց Գերմա-նիոյ վարչապետ Օլաֆ Շոլցին՝ «Ուշքանիոյ աջակցելու համար մեր հաւաքական ջանքերը ամրապնդելուն եւ մեր բոլորի խօսքը միաւորե-լուն համար»:

«Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին կար-ծեց, որ կրնայ մեր եւ մեր եւրոպացի դաշնակից-ներուն միջեւ պառակ-տում յառաջացնել, սա-կայն ձախողեցաւ», ըսաւ Պայտըն:

Միութեան: Եթէ հայ դաշնակից-ները շահագրգռուած են օգտա-գործել ՀԱՊԿ-ի ներուժը, ապա անոր առաքելութիւնը կրնայ արագ տեղակայուիլ Հայաստա-նի մէջ:

Ինչպէս նախապէս, մենք կը կարծենք, որ հայ-ազրպէյճա-նական յարաբերութիւններու կարգաւորման եւ, ընդհանրա-պէս, շրջանին մէջ կացութեան բարելաւման ամենէն կայուն եւ երկարաժամկետ հիմքը Ռու-սիոյ, Ազրպէյճանի եւ Հայաս-տանի ղեկավարներու 9 նոյեմբեր 2020-ի, 11 յունւար եւ 26 նոյեմբեր 2020-ի յայտարարու-թեան հիման վրայ տեղակայ-ւած ռուսական խաղաղապահ զորախումբը, ինչպէս նաեւ Հա-յաստանի սահմաններուն ծա-ռայող Ռուսիոյ սահմանապահ-ները: Անոնք Եւրոպական Միու-թեան դէտերու պահուածքին պիտի արձագանգեն՝ հաշուի առնելով «տեղւոյն վրայ» կա-ցութեան զարգացումը:

ՄԱՀԱՉԻ

Տեր եւ տիկին Մեսրոպ եւ Այտա Զենտիճեան
եւ զաւակունք
Տեր եւ տիկին Դենոնդ-Ռոպեր եւ Մարի Զենտիճեան
(Սպանիա)
Տեր եւ տիկին Պետրոս եւ Լաուրա Զենտիճեան
(Իտալիա)
Տեր եւ տիկին Էլի եւ Սեդա Խուրի եւ զաւակ
(Միացեալ Նահանգներ)
Տիար Վարդան Զենտիճեան
(Միացեալ Նահանգներ)
Հանգուցեալ Ամօլ Հայկոյի ընտանիք
(Միացեալ Նահանգներ)
Հանգուցեալ Ժաքլին Պիսմարժիի ընտանիք
Տիկին Վերժին Խուրի եւ զաւակունք
(Միացեալ Նահանգներ)
Հանգուցեալ Ժանեթ Ֆրանսիսի ընտանիք
(Միացեալ Նահանգներ)
Տիկին Թերեզ Պետրոս եւ զաւակունք (Միացեալ Նա-
հանգներ)
Տիկին Լայլա Սապալոյ եւ զաւակունք (Սուրիա)
Տիար Էլի Մարտինի եւ զաւակունք
Տեր եւ տիկին Թոնի եւ Շուքա Մարտինի եւ զաւա-
կունք (Միացեալ Նահանգներ)
Զենտիճեան եւ Մարտինի ընտանիքներ
Ազըլեան եւ Տիագ ընտանիքներ
Սալկատո եւ Տէ Քարո ընտանիքներ
Խուրի եւ Հայյո ընտանիքներ
Պիսմարժի եւ Ֆրանսիս ընտանիքներ
Պետրոս եւ Սապալոյ ընտանիքներ
Ներսեսեան եւ Հաուլք ընտանիքներ
Սողոմոնեան ընտանիք
եւ համայն ազգականներ կը գումեն իրենց մօր, մեծ
մօր, զոքանչին, քորը, հօրաքորը, մօրաքորը եւ հարա-
զատին՝

ՏԻՐԱՄԱՅՐ
ՔԼԵՐ ՔԵՆՏԻՐՃԵԱՆԻ
(Ծնեալ՝ ՄԱՐՏԻՆԻ, Հալէոյ, 1940-ին)

մահը, որ պատահեցաւ երկուշաբթի, 2 յունւար 2023-ին, Միացեալ Նահանգներ:
Յուդարկաւորութեան արարողութիւնը պիտի կա-տարուի շաբաթ, 28 յունւարին, կէսօրէ ետք ժամը 1:00-ին, Պուրճ Համուտի Հայ կաթողիկէ Սուրբ Փրկիչ եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Հայ կաթողիկէ գերեզ-մանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահադգ:
- Ցաւակցութիւնները պիտի ընդունուին յետ թաղ-ման արարողութեան, Ս. Փրկիչ եկեղեցւոյ սրահին մէջ, մինչեւ երեկոյեան ժամը 7:00, իսկ կիրակի, 29 յունւարին, կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երե-կոյեան ժամը 6:00:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՄԻՅՐԱՆ ՍԱՐԿԱՐՈՍԵԱՆԻ մահուան Ա. տարելի-ցին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կա-տարուի կիրակի, 29 յունւար 2023-ին, Չալքայի Հայ կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10:00-ին: